Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5674

ԿԿԿ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՑԵՎ
ԱՆԴԱՅԻ ԲԱԺԻՆ

# ՀԱՄ. Կ. (Բ) Կ.
# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

3КП1(07)
Z-22

ՊԵՏՀՐԱՏ 1931 ԵՐԵՎԱՆ

3КМ1 (07)
Z-22
1 9 AUG 2005
1 DEC 2009

ՀԱՄ Կ (բ) ԿԿԿ ԿՈՒԼՏՇՐՋԱՅԻ ՅՆԿ.
ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ ԲԱԺԻՆ

Կոմ. ԲՈՒՀ-երի յեվ կուսլուսավո-
րության բարձրագույն ողակների
ծրագիր 1931/32 ուսումնական
տ ա ր վ ա

# ՀԱՄ. Կ. (Բ) Կ.
# Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

13 SEP 2013

5674

Պետհրատի տպարան
Գլավլիտ 6862 (բ)
Հրատարակ. 1875
Պատվեր 5346
Տիրաժ 1500

# ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներկա ծրագրի հիմքում դրված են այն դրույթները, վոր տվել են լենինիզմի, կուսակցության պատմության և Կոմինտերնի պատմության դասավանդման խնդիրների առթիվ կայացած խորհրդակցությունը (հրավիրված մարքսիստ-պատմաբանների Ընկերության կողմից 1930 թվի փետրվարի 9—13-ին) և Կ.Կ.-ի Կուլտպրոպին կից սեկտորների խորհրդակցությունը, վոր տեղի ունեցավ 1931 թվի մարտին:

1. Կուսակցության պատմության ուսումնասիրության խնդիրը հանդիսանում է բայլշևիզմի պատմության ուսումնասիրությունը կոմունիզմի համար պրոլետարիատի մղած պայքարի ղեկավարության բնագավառում նրա (բայլշևիզմի) տեսական

ու պրակտիկ գործունեության ուսումնասիրությունը։

Կուսակցության պատմության ուսումնասիրության առարկան հանդիսանում է բոլշևիզմի ծրագրային, տակտիկական ու կազմակերպչական հայացքների մշակման ու զարգացման պատմությունը, կուսակցության պայքարի գործնական փորձի ուսումնասիրությունը, պրոլետարիատի դասակարգային կռվի բոլոր էտապներում Ռուսաստանում և Խ. Ս. Հ. Մ.-ում։

2. Ներկա դասընթացի նպատակն է տալ մարքսիստական-լենինյան թեորիայի բազայի վրա բոլշևիզմի ծրագրային, ստրատեգիական, տակտիքական ու կազմակերպչական սկզբունքների ամբողջական ու լայն պատկերացումը։

3. Կուսակցության պատմության ուսումնասիրությունն անբաժանորեն կապված է լենինիզմի բոլոր կարևորագույն պրոբլեմների քննության հետ, նրանց պատմական զարգացման մեջ։

Այդ պատճառով էլ, կուսակցության պատմությունն ուսումնասիրելիս, առանձին նշանակություն պետք է տալ Լենինի



դերին, իբրև կուսակցության առաջնորդի, տեսաբանի ու կազմակերպչի։

Կուսակցության պատմության դասընթացն անհրաժեշտ է կառուցել լենինյան ժառանգության բազմակողմանի ուսումնասիրության հիմունքի վրա։ Պրոլետարիատի հեղափոխական կռվի բոլոր էտապներն հասկանալու համար, ինչպես կուսակցության պատմության, այնպես էլ իմպերիալիզմի ու սոցիալիստական հեղափոխության ամբողջական շրջանի զարգացման վողջ ընթացքի ներքին կապն ըմբռնելու համար,— անհրաժեշտ է տիրապետել լենինյան մեթոդոլոգիային։

4. Կուսակցության պատմության ուսումնասիրությունը պետք է անմիջորեն իր յերեսով դարձնել դեպի կուսակցության ու Կոմինտերնի քաղաքական ակտուալ խնդիրները, յուրաքանչյուր կուսակցականի զինելով մեր կուսակցության զարգացման ամբողջ նախընթաց էտապի փորձով, հաջող պայքար մղելու համար կուսակցության գլխավոր գծի համար ներկայիս։

5. Կուսակցության պատմության, իբրև բոլշևիզմի պատմության ուսումնասիրու-

թյունը, հանդիսանում է քաղաքականապես սրված ու անողոք պայքար և մերկացում բոլշևիզմի բոլոր հակառակորդների, նրա բոլոր թշնամիների, ինչպես բանվորական շարժման մեջ, այնպես էլ նրանից դուրս: Բոլշևիզմի հակառակորդների պատմությունն ուսումնասիրվում է այն չափով, ինչ չափով անհրաժեշտ է ցույց տալ, թե՝ ինչպիսի թշնամիների հետ պայքարելով է աճել, ամրապնդվել ու պողպատվել բոլշևիզմը:

Կուսակցության պատմության, իբրև բոլշևիզմի պատմության, ուսումնասիրությունը, պահանջում է ուշադրության կենտրոնում դնել պայքարը յերկու փրոնտում՝ մանր-բուրժուական ռեֆորմիզմի և մանր-բուրժուական հեղափոխականության դեմ, հաշտվողականության դեմ, բոլոր թեքումների դեմ, վոր ամենատարբեր ձևերով գոյություն են ունեցել և ունեն Համ. Կ.(բ) Կ. ներսում:

Կուսակցության պատմության ուսումնասիրությունը պետք է իրեն առանցքը դարձնի պարզել բոլոր թեքումների, գաղափարական տատանումների, Փրակցիոն խմբավո-



րումների յերևան գալու պայմանները նրանց դեմ լենինյան կուսակցության կողմից հետևողականորեն ու մինչև վերջը մղվող պայքարի ձևերը:

6. Տվյալ ծրագրի ակտուալացումը պետք է անցկացնել բոլոր թեմաներում: Այսպես, որինակ, խոսելով եկոնոմիստների «տակտիկայի-պրոցեսի» մասին, անհրաժեշտ է հարցի այդ ոպորտունիստական դրույթը կապակցել աջերի «ինքնահոսի» թեորիայի ու նրանց ժամանակակից պրակտիկայի հետ: Բացատրելով «Պրավդայի» դերը (1912—1914 և 1917 թվականներին), անհրաժեշտ է կապակցել այդ դերը մասսաներին կուսակցության ակտուալ հարցերի շուրջը մոբիլիզացիայի յենթարկելու (համախմբելու) ժամանակակից խնդիրների հետ, բանգյուղթղթակցական շարժման դերի հետ, շրջանային մամուլի հետ և այլն:

7. Տվյալ դասընթացն անցնելիս պետք է հաշվի առնել նրա հետևյալ առանձնահատկությունները.

ա) Լայն պարզաբանումն որգանական այն սերտ կապի, վոր գոյություն ունի բոլշևիզմի պատմության և միջազգային բանվո-

ծական ու կոմունիստական շարժման պատմության միջով · այստեղ առանձնապես կարևոր է 2-րդ Ինտերնացիոնալի շրջերում բալշևիզմի միջազգային ասպարեզ դուրս գալու և բալշևիկների 3-րդ Ինտերնացիոնալի համար մղած պայքարի ուսումնասիրությունը :

բ) Հանգամանորեն ծանոթացումն կուսակցության պատմության բոլոր էտապներում Լենինի կատարած դերի և նրա գլխավոր աշխատությունների հետ :

գ) Հանգամանորեն ծանոթացումն կուսաշինարարության պրակտիկայի հետ կուսակցության պատմության զանազան էտապներում, մասնավորապես առանձին կուսակազմակերպությունների (Լենինգրադի և ուրիշ) և կուսակցության գործունեության առանձին ձևերի (աշխատանք բանակի մեջ և այլն) դերը :

դ) Բոլոր թեմաներով անցկացվող կուսակցության ազգային քաղաքականության և ազգային առանձին կոմկուսակցությունների դերի հետևողական քննությունը (օրինակ ուկրաինական հարցը քաղաքացիական կռվում) :



ե) Կուսակցության պատմության զանազան էտապներում բանվոր դասակարգի մասսայական կազմակերպությունների վերաբերմամբ կուսակցության ցուցաբերած ղեկավարության ուսումնասիրությունը :

զ) Կուսակցության ծրագրի մշակման բոլոր էտապների սիստեմատիկ քննությունը :

է) Պատմության զանազան էտապներում կուսակցության սոցիալական ու քանակական կազմի մեջ տեղի ունեցած փոփոխությունների քննությունը :

ը) Ընկ · Ստալինի դերը բալշևիզմի պատմության և լենինիզմի հիմնական գաղափարների մշակման մեջ :

Տ · Դասընթացն անցնելիս պետք է ուշադրություն դարձնել այն առանձին հարցերի վրա, որոնք պետք է կապել զանազան թեմաների հետ, ինչպես օրինակ՝ կուսակցության հեղափոխական տրադիցիաների հետ ծանոթանալը, հակակուսակցական ֆրակցիաների, խմբավորումների և պառակտումների առաջացման մեխանիկայի հետ մանրամասնորեն ծանոթանալը, փոքրամասնության մեծամասնությանը հպատակվելու պայմանների հետ և այլն :

9 Առանձին թեմաների բովանդակության մեջ պետք է հաստատել պարզ սահմանավորումն Խ. Ս. Հ. Մ.-ի ժողովուրդների պատմության և Համ. Կ (բ) Կ պատմության ծրագրերի միջև։ Խ. Ս. Հ. Մ.-ի ժողովուրդների պատմության ուսումնասիրությունն ավելի առաջ պետք է սկսել քան Համ. Կ (բ) Կ պատմության ուսումնասիրությունը, վորպեսզի այնպիսի հարցերն, ինչպիսիք են՝ «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում», «Կապիտալիզմի զարգացման յերկու ուղիները», «Նարոդնիկությունը», արդեն անցած լինեն մինչև Համ. Կ (բ) Կ պատմության պարապմունքներն սկսելը։

Յետհոկտեմբերյան թեմաների մեջ նախապես պետք է անցկացնել հարցերի կապակցությունն և պարալելիզմի վերացումն լենինիզմի և տնտեսա-քաղաքականության հետ։



# ԾՐԱԳԻՐ

## ՀԱՄ Կ(Բ)Կ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՅՔԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԾԻ ՀԱՄԱՐ ՅԵՎ. ՀԱՄ Կ (Բ) Կ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. ԹԵՄԱ

## ԲՈԼՇԵՎԻԶՄԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

### 1. ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԾԱԳՈՒՄՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

*Սոցիալ-դեմոկրատիայի և մարքսիզմի ծագման նախադրյալները Ռուսաստանում։ 70-ական թվականների բանվորական շարժումն ու նրա բնույթը։ «Բանվորների Հարավ-ռուսական միությունն» և Ռուսական բանվորների Հյուսիսային միությունը»,*

սոցիալ-դեմոկրատական էլեմենտները (տարրերը) նրանց ծրագրների մեջ, նրանց կազմը, գործունեությունը, նրանց նշանակությունն իբրև Ռուսաստանի պրոլետարիատի սկզբնական քաղաքական կազմակերպությունների:

«Աշխատանքի ազատագրման» խմբակի կազմակերպումը: Արևմտա-եվրոպական սոցիալիստական շարժման փորձն «Աշխատանքի ազատագրման» խմբակի գործունեության մեջ: «Աշխատանքի ազատագրման» խմբակի պայքարը նարոդնիկության ու նարոդովոլցիների դեմ:

Օպորտունիստական տենդենցների սաղմերը «Աշխատանքի ազատագրման» խմբակի մեջ: «Աշխատանքի ազատագրման» խմբակի նշանակությունը Ռ. Ս. Դ. Բ. կուսակցության պատմության մեջ: Պրոպագանդի շրջանի մարքսիստական խմբակներն ու կազմակերպությունները: Նրանց կառուցվածքն ու գործունեությունը: Բլագոևի խմբակը, նրա բնութագիրը: Մարքսիստական խմբակներն ու «Աշխատանքի ազատագրման» խմբակը: Առաջին սոցիալ-դեմոկրատական



կազմակերպությունների պատմական նշանակությունն Ռուսաստանում:

Ինչպես «ժառանգություն» ստացան Ռուսաստանում մարքսիզմն ու սոցիալ-դեմոկրատիան իրենց նախորդ հեղափոխական շարժումից: «Ժառանգության» պրոբլեմի Լենինյան դրույթը և պայքարն յերկու Փրոնտում այդ դրույթի օպորտունիստական խեղաթյուրումների դեմ ժամանակակից պատմական գրականության մեջ:

## 2. ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հեղափոխական մարքսիզմի գաղափարների (իդեաների) մշակումը Ռուսաստանում՝ պրոլետարիատի ինքնուրույն քաղաքական շարժման անհրաժեշտությունը, պրոլետարիատի հեգեմոնիան ընդհանուր-հեղափոխական պայքարում, պրոլետարիատի և գյուղացիության միությունը, վերաբերմունքը դեպի լիբերալները, պրոլետարական կուսակցության կազմակերպման անհրաժեշտությունը, պայքարն ինքնակալության տապալման համար վորպես հեղափոխական

չարժման ամենամերձավոր խնդիր: «Աշխատանքի ազատագրման» խմբակի, մասնավորապես Պլեխանովի և Լենինի դերը սոցիալ-դեմոկրատիայի հիմնական գաղափարների ձևավորման մեջ և տարբերությունը նրանց միջև:

Պայքարը հեղափոխական մարքսիզմի հեգեմոնիայի համար յերկու փրոնտում: 70-ական թվականների հեղափոխական նարոդնիկությունն ու 90-ական թվականների լիբերալ նարոդնիկությունը հեղափոխական մարքսիզմի գնահատությամբ: Լիբերալ նարոդնիկների տեսական, տնտեսական ու քաղաքական հայացքների քննադատությունը. Հեղափոխական մարքսիզմի պայքարը մանր-բուրժուական նարոդնիկական «սոցիալիզմի» դեմ և պրոլետարական դիկտատուրայի ժամանակ գյուղացիական տնտեսության վոչ կապիտալիստական եվոլյուցիայի խնդրի դրույքը Մարքս-Ենգելսի և Լենինի կողմից: Տարբերությունը Լենինի ու Պլեխանովի միջև 90-ական թվականներին, նարոդնիկության քննադատության խնդրում: Հեղափոխական մարքսիզմի նարոդնիկության



դեմ մղած պայքարի դասակարգային արմատները: Հեղափոխական մարքսիստների կողմից նարոդնիկների դեմ մղած պայքարի անրագումարը, նրա օբյեկտիվ իմաստն ու պատմական նշանակությունը: Նեո-նարոդ իկությունը (Կոնդրատև-Չայանով) և րա կապն աջ թեքման հետ: Թեքում դեպի արոդնիկությունը (Թեոդորովիչ):

## 3. ՊԱՅՔԱՐ ԼԵԳԱԼ ՄԱՐՔՍԻԶՄԻ ԴԵՄ

«Լեգալ մարքսիզմը»— մարքսիզմի արացոլումն է բուրժուական գրականության եջ: «Լեգալ մարքսիզմի» սոցիալ-տնտեական արմատները: «Լեգալ մարքսիզմի» յությունը կայանում է մարքսիզմն հօգուտ ուսաստանի բուրժուազիայի ու բուրժուաան զարգացման օգտագործելու փորձի եջ: «Լեգալ մարքսիզմի» հիմնական գաղաարներն հանդիսանում են՝ մարքսիզմի եվիզիան թեորիայի և պրակտիկայի խնդիրներում՝ կապիտալիզմի ապոլոգիան «գնանք կապիտալիզմի մոտ սովորելու»), դասակարգային հակասությունները սքողնջելը, դասակարգային կռվի կոծկելը,

կապիտալիզմի հեղափոխական կրախի մարքսյան թեորիայի և պետության դասակարգային բնույթի դիալեկտիկական մարքսիզմի փոխանակումը օբյեկտիվիզմով: «Լեգալ մարքսիզմի» կապը Բեռնշտեյնյանության հետ: Հեղափոխական մարքսիստների կողմից «լեգալ մարքսիստների» հետ ժամանակավոր միություն հաստատելու պատճառներն ու ձեվերը: «Լեգալ մարքսիզմի» լենինյան ու պլեխանովյան քննադատությունը:

Լենինի և Պլեխանովի քննադատության տարբերությունը նարոդնիկության ու «լեգալ մարքսիզմի» նկատմամբ իբրև սոցիալ-դեմոկրատիայի յերկու տակտիկայի ծագում՝ գյուղացիության ու լիբերալ բուրժուազիայի վերաբերմամբ՝ յերկու տակտիկայի՝ բոլշևիկյան և մենշևիկյան:

## 4. ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Կապիտալիզմի զարգացումը 90-ական թվականներին և բանվորական շարժման վերելքն իբրև նախադրյալներ սոցիալ-դեմոկրատիայի ձեվավորման: Խմբակային պրոպագանդից մասսայական ագիտացիայի անցնելը: Բանվորական շարժման ձուլումը սոցիալիզմի հետ: «Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միություններ»-ի ծագումը և նրանց նշանակությունը կուսակցության պատմության մեջ: «Պայքարի միությունների» կազմը, կազմակերպչական կառուցվածքն ու գործունեությունը (առանձնապես Պետերբուրգինը), նրանց դերը բանվորական մասսայական շարժման ղեկավարության մեջ: Լենինի դերը սոցիալ-դեմոկրատիայի կազմակերպչական ձեվավորման պրոցեսում: Կուսակցության 1-ին համագումարի նախապատրաստությունը: Ռ. Ս. Դ. Բ. Կ.-թյան 1-ին համագումարը, նրա կազմը, վորոշումները, մանիֆեստը: 1-ին համագումարի նշանակությունը կուսակցության պատմության մեջ: Ազգային սոցիալ - դեմոկրատական կազմակերպությունների գոյանալը Ռուսաստանում: Ռ. Ս. Դ. Բ. Կ. մուտքն 2-րդ Ինտերնացիոնալի մեջ:

## 5· ԵՊՌԽԱՅԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Ռ. Ս. Դ. Բ. կուսակցության կազմակերպումը: Բայլշևիզմի և մենշևիզմի էլեմենտները սոցիալ-դեմոկրատիայի գաղափարական ու կազմակերպչական ձևավորման պրոցեսում: Լենինի բրոշյուրն՝ «Ի՞նչ են ժողովրդի բարեկամները» և «Ի՞նչպես են պատերազմում նրանք սոցիալ-դեմոկրատների դեմ» և նրա նշանակությունը բայլշևիզմի պատմության մեջ: Լենինի պայքարն երկու ֆրոնտում հեղափոխական մարքսիզմի հեգեմոնիայի համար 90-ական թվականներին:

2-ՐԴ ԹԵՄԱ

# ԲԱՅԼՇԵՎԻԶՄԻ ԾԱԳՈՒՄԸ

## I· «ԻՍԿՐԱ»-ՅԻ ՊԱՅՔԱՐԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԱՎԱՆԳԱՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Կուսակցության դրությունը I համագումարից հետո: Էկոնոմիզմի առաջացման պատճառներն և նրա սոցիալ-տնտեսական արմատները: Էկոնոմիզմի գաղափարական



կապը «լեգալ մարքսիզմի» հետ: Էկոնոմիստների ծրագրային, տակտիկական և կազմակերպչական հայացքները: Էկոնոմիզմի հիմնական դրույթը՝ «բանվորներին—տնտեսական, լիբերալներին—քաղաքական պայքար»: Հեղափոխական թեորիայի դերի ժխտումը էկոնոմիստների կողմից: Գիտակցականության անտեսելն ու տարերայնության առաջ խոնարհվելը: Էկոնոմիստների պոչականությունը (ХВОСТИЗМ): Պրոլետարիատի հեգեմոնիայի ժխտումը: Էկոնոմիստների չհասկանալը կուսակցության, վորպես պրոլետարիատի ավանգարդի, դերը և այստեղից բխող կազմակերպչական կուստարնիկությունը: Էկոնոմիզմի հիմնական ուղղությունները և նրա կենտրոնները («Կրեդո», «Ռաբոչայա միսլ», «Ռաբոչեյե դելո», «Ռուսական սոցիալ-դեմոկրատների արտասահմանյան միություն»): Զուբատովշչինա և էկոնոմիզմ: Էկոնոմիստները լիբերալ բուրժուազիայի գործակալներն (ագենտներն) են բանվորական շարժման մեջ: Էկոնոմիզմը միջազգային ռեֆորմիզմի ռուսաստանյան այլակերպությունն է: Հեղափոխական մարքսիստների պայքարը էկոնոմիստ-

ների դեմ։ 17 սոցիալ-դեմոկրատների բողոքը Լենինի գլխավորությամբ վորպես առաջին բաց ելույթ եկոնոմիզմի դեմ։ «Իսկրայի» կազմակերպման պատմությունը և Լենինի դերը նրա հիմնադրման ու աշխատանքների մեջ։ «Նախ քան միանալը և միանալու համար մենք պետք է նախ վճռականապես ու պարզորոշ սահմանազատվենք»։ «Իսկրայի» պայքարը եկոնոմիզմի և եսերների դեմ։ «Իսկրայի» պայքարն յերկու ֆրոնտում կուսակցության ներսում։ «Իսկրայի» ծրագրային, տակտիկական ու կազմակերպչական հայացքները։ «Իսկրայի» պայքարը հեղափոխական թեորիայի համար։ «Իսկրայի» պայքարը բուրժուական լիբերալիզմի դեմ։ «Տակտիկան-պլան» իսկրականների և «տակտիկան-պրոցես» եկոնոմիստների։ Լենինյան «Ի՞նչ անել»-ն և նրա նշանակությունը բոլշևիզմի պատմության մեջ։ Լենինի կազմակերպչական պլանը՝ հիմնական օղակը — պրոֆեսիոնալ հեղափոխականների կազմակերպության ստեղծելն է։ «Իսկրայի» գործնական դերը կուսակցության համախմբման մեջ։ Լենինի դերը «Իսկրայի» մեջ։ «Իսկրան» վորպես միանգամայն բոլշևիկյան



հոսանք։ Ընդհանուր և ագրարային ծրագրերի մշակումն «Իսկրայի» կողմից և տարաձայնություններ խմբագրության ներսում վորպես նախագուշակումն ապագա տարաձայնությունների բոլշևիզմի ու մենշևիզմի միջև հեղափոխական մարքսիզմի արմատական հարցերում և վորպես նախագուշակ II համագումարում տեղի ունեցած պառակտման։ Իսկրայական կազմակերպության ստեղծումն Ռուսաստանում և արտասահմանում։ Իսկրայական և հակաիսկրայական տենդենցների պայքարը տեղական կուսակցական կազմակերպությունների մեջ։ «Միավորման» փորձերն արտասահմանում։ «Պայքար» (Ռյազանով) խմբակի հաշտվողական տակտիկան։ «Հարավային բանվոր» («Южный рабочий») խմբակը։ Բելոստոկի կոնֆերենցիան 1902 թվին։ Պսկովի խորհրդակցությունը և կազմակերպական կոմիտեյի ստեղծումը։ Կուսակցական կազմակերպությունների դրությունն համագումարից առաջ։

## II. Ռ. Ս. Դ. Բ. Կ. II ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Համագումարի կազմն ու հիմնական խմբավորումներն այնտեղ։ Յերկու շրջան հա-

մագումարի աշխատանքներում՝ իսկրայականների պայքարն էկոնոմիզմի դեմ և պառակտում իսկրայականների մեջ: Մարտովականների էկոնոմիզմի դիրքերն անցնելը: Ծրագրային, տակտիկական ու կազմակերպչական տարաձայնություններ համագումարում: Կազմակերպչական հարցն իբրև տըվյալ էտապի հիմնական օղակ: Մենշևիկների կազմակերպչական օպորտունիզմը՝ կուսակցություն—վորպես պրոլետարիատի ավանգարդի դերի անհասկացողությունը, բանվորական շարժման համար կազմակերպման ունեցած նշանակության թերագնահատումը, կուսակցության ցենտրալիզմի ու կարգապահության (դիսցիպլին) հարցերում—ինդիվիդուալիզմ (անհատականություն) ու անարխիզմ: Ազգային հարցը կուսակցության կառուցման մեջ (ֆեդերացիա թե՞ ավտոնոմիա): II համագումարն և ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները: Պայքար յերկու ֆրոնտում մանր-բուրժուական օպորտունիզմի դեմ ազգային հարցում (Բունդի սեպարատիզմը և լեհական սոցիալ-դեմոկրատների նիհիլիզմը): Կենտրոնական օրգանի և Կ. Կ-ի ընտ-



րություններ: Պառակտում համագումարում: Համագումարում տեղի ունեցած պայքարի ընդհանուր բնութագիրը: Յերկու ֆրակցիա համագումարում և նրանց պլատֆորմերի ժառանգական կապը իսկրայականության ու էկոնոմիզմի հետ: Համագումարի աշխատանքների ընդհանուր հանրագումարը և նրա տեղը կուսակցության ու միջազգային բանվորական շարժման պատմության մեջ:

## III. ՊԱՅՔԱՐ III ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀԱՄԱՐ

Մենշևիկների պառակտիչ աշխատանքը II համագումարից հետո: Նոր «Իսկրայի» պլատֆորման: Տրոցկին և նրա պայքարը Լենինի դեմ: Պլեխանովի հաշտվողական դիրքը: Պառակտման ձևավորումը: ԿԿ-ի հաշտվողականությունը: Կուսակցության պառակտումն և տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները: Կուսակցության պառակտումն և II Ինտերնացիոնալի առաջնորդների դիրքը: Բոլշևիկների պայքարը կուսակցության միասնակա-

նության համար։ «Մեծամասնության կոմիտեների բյուրոյի» և «Вперед»-ի («Առաջ») կազմակերպումը։ Բոլշևիկների պայքարը կուսակցության III համագումարի համար։ Լենինի պայքարը հաշտվողականության դեմ։ Մենշևիկների կազմակերպչական օպորտունիզմի վերածումը տակտիկականի։ Բոլշևիզմի տակտիկան յերկրում աճող հեղափոխական կրիզիսի պայմաններում։ Դրությունը կուսակցության մեջ III համագումարի նախօրյակին։ III համագումարի համար մղվող պայքարի ժամանակաշրջանի նշանակությունը բոլշևիզմի պատմության մեջ։

## IV. ԵՊՈԽԱՅԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Յերկու տենդենցների պայքարը «մարքսիստական բանվորական կուսակցություն» գոյացման պրոցեսում։ Մենշևիզմի կապը «լեգալ մարքսիզմի», էկոնոմիզմի և արևմտայեվրոպական օպորտունիզմի հետ։ Լենինի պայքարը յերկու ֆրոնտում և հաշտվողականության դեմ։ Բոլշևիզմի գաղափարական ու կազմակերպչական ձևավորումը։ Բոլշևիզմի կազմակերպչական փորձի նշա-



նակությունը Կոմինտերնի համար։ II համագումարում տեղի ունեցած պառակտման դերն ու տեղը միջազգային բանվորական շարժման պատմության մեջ։

3-ՐԴ ԹԵՄԱ

# ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՐԺՈՒԱ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՄ (1905—1907 Թ. Թ.)

## I. ԲՈԼՇԵՎԻԶՄԻ ՍՏՐԱՏԵԳԻԱՆ ՈՒ ՏԱԿՏԻԿԱՆ

### Ա. Հեղափոխության բնույթն ու շարժիչ ուժերը

1905 թվի հեղափոխությունն իբրև իմպերիալիզմի շրջանի առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխություն, պրոլետարիատի հեգեմոնիայի տակ։ Բուրժուա-դեմոկրատական հեղափոխություն — ըստ սոցիալ-տնտեսական բովանդակության, պրոլետարական — ըստ պայքարի մեթոդների։ Նրա յուրահատկությունը՝ գյուղացիական բուրժուական հեղափոխություն կապիտալիզմի զարգացման շատ բարձր շրջանում

ամբողջ աշխարհում և համեմատաբար բար-ձըր՝ Ռուսաստանում։ Բուրժուական հեղափոխություն հակառակ բուրժուազիայի և առանց բուրժուազիայի։

Ագրարային հարցը որպես 1905 թվի հեղափոխության հիմնական հարց։ Պրոլետարիատն ու գյուղացիությունը որպես միակ երկու դասակարգ, որ շահագրգռված են հեղափոխությունն հասցնել մինչև վերջը։ Պրոլետարիատը հեղափոխության մեջ հեգեմոն է, նրա ղեկավարության տակ գտնվող գյուղացիությունը—ամենամերձավոր դաշնակիցը։ Ճնշված ազգությունները որպես պրոլետարիատի դաշնակից։ Ռուսաստանի կապիտալիստական զարգացման երկու հնարավոր ուղիներ։ Պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան որպես բուրժուա-դեմոկրատական հեղափոխության կատարյալ հաղթանակ։ Բուրժուա-դեմոկրատական հեղափոխության սոցիալիստականի վերաճման պրոբլեմների լենինյան գնահատումը։ Ռուսաստանի 1905 թվի բուրժուա-դեմոկրատական հեղափոխության սոցիալիստակա-



նի վերաճման հնարավորությունը։ Հեղափոխությունն Ռուսաստանում՝ որպես միջազգային սոցիալիստական հեղափոխության նախերգանք։ Վերաճման հնարավորության Բուխարինյան-սլեպկովյան ժխտումը։

1905 թվի հեղափոխության յուրահատկության չհասկանալը մենշևիկների կողմից։ Նրանց մեկնաբանելը բուրժուական հեղափոխությունը որպես մի հեղափոխություն, որ կատարում է բուրժուազիան բուրժուազիայի համար։ Պրլետարիատի հեգեմոնիայի ժխտումը նրանց կողմից և նրա (պրոլետարիատի) դերը ձախ օպոզիցիայի հավասարեցնելը։ Բուրժուա-դեմոկրատական հեղափոխության մեջ գյուղացիության հեղափոխական դերի անգիտանալը մենշևիկների կողմից։ «Պերմանենտ հեղափոխության» տրոցկիստական թեորիան որպես մենշևիզմի ձախ այլակերպություն։ Հեղափոխության բուրժուական բնույթի չհասկանալը, գյուղացիության հեղափոխական դերի ժխտումը, պրոլետարիատի, որպես հեղափոխության մեջ գյուղացիական մասսաների ղեկավարի ուժերին չհավատալը։ Տրոցկու թեորիայի օբյեկտիվ նշանակությունն է՝

հեղեմոնիան հանձնել բուրժուազիայի ձեռքը: Պայքար 1905 թվի հեղափոխության բնույթի խեղաթյուրումների դեմ ժամանակակից գրականության մեջ: 1905 թվի հեղափոխության բնույթի ու շարժիչ ուժերի լենինյան գնահատության նշանակությունը Չինաստանի, Հնդկաստանի և այլն հեղափոխության գնահատության համար և չինական ու հնդկական հարցերի վերաբերյալ ժամանակակից օպորտունիստական խեղաթյուրումների կապակցությունը 1905 թվի հեղափոխության մենշևիկների ու տրոցկիստական կոնցեպցիաների հետ:

### Բ. Տակտիկա

Հունվարյան դեպքերի գնահատումը: Վերաբերմունք դեպի Շիդլովսկու կոմիսիան: Բոյկոտ բուլիգինյան դումային: Տնտեսական և քաղաքական գործադուլների փոխհարաբերությունը: Ընդհանուր գործադուլ, որ վերածվում է զինված ապստամբության:

Տակտիկական հարցերն III համագումարում: Ապստամբությունն իբրև արվեստ: Կուսակցությունը —զինված ապստամբության կազմակերպիչ: Ապստամբությունը



որպես հեղափոխությունն իր վախճանին հասցնելու հիմնական պայման:

Զինված ապստամբության կազմակերպման ու տեխնիկական նախապատրաստման անհրաժեշտության ժխտումը մենշևիկների կողմից: Մենշևիկների խվոստիստական վերաբերմունքը դեպի ապստամբությունը որպես դեպի «տակտիկա-պրոցես»: Տրոցկու վերաբերմունքն ապստամբությանը: 1905 թվի ապստամբության նախապատրաստումը կուսակցության կողմից: Կուսակցության ռազմա-մարտական աշխատանքը: Պարտիզանական պատերազմը և բոլշևիկների վերաբերմունքը դեպի նա: Զինված ապստամբության մասին լենինյան ուսմունքի ստուգումը 1917 թվի հոկտեմբերին Համբուրգի ապստամբության, Կանտոնի ապստամբության մեջ և այլն:

Ժամանակավոր հեղափոխական կառավարություն, որ դուրս է գալիս հաղթական ապստամբության ծոցից: Ժամանակավոր հեղափոխական կառավարությունը՝ ոչ թե կարգ կազմակերպելու, այլ նոր սոցիալական պատերազմ կազմակերպելու համար: Մենշևիկյան ըմբռնումն ժամանակավոր հեղա-

փոխական կառավարության — որպես բուրժուազիայի «կարգ» կազմակերպող կառավարության, որ պիտի կազմակերպեր «կարգը»: Պրոլետարիատի ներկայացուցիչների մասնակցությունը ժամանակավոր հեղափոխական կառավարությանը (ճն․ում «վերևից» և «ներքևից»): Խորհուրդները որպես ապստամբությունը ղեկավարող մարմիններ և որպես հեղափոխական իշխանության մարմիններ:

Մենշևիկյան գնահատումը խորհուրդների՝ որպես տեղական ինքնավարության և պրոլետարիատի ու բուրժուազիայի պայքարը համաձայնեցնող մարմիններ: Բոլշևիկները խորհուրդներում 1905 թվին: Խորհուրդների 1905 թվի փորձի նշանակությունը 1917 թվի և Կոմինտերնի համար:

Կուսակցության տակտիկան դեկտեմբերյան ապստամբության ճնշումից — հեղափոխության կուլմինացիոն կետից հետո պայքար սահմանադրական իլյուզիաների դեմ: Բոյկոտ I դումային և թե ի՞նչ մըտքով սխալ էր այդ բոյկոտը: Ընտրական համաձայնություններ և «ձախ»-բլոկիստական տակտիկան II դումայի ընտրական կամպանիայի ժամանակ: Հեղափոխական պրոլետարիատի դասակարգային կուսակցության լիակատար ինքնուրույնությունը որպես յելակետ բոլշևիկների ընտրական ընդհանուր տակտիկայի: Սոսկ մասնակի համաձայնությունների (օրինակ տրուդովիկների (աշխատավորականների) հետ կադետների դեմ) թույլատրելի համարելն ընտրական սխեմի բարձր աստիճաններում: Մենշևիկների սահմանադրական իլյուզիաները: Մենշևիկների ընտրական բլոկները կադետների հետ:



Պայքար մենշևիկյան «պատասխանատու մինիստրություն» լոզունգի դեմ: Դումայի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի գործունեությունն ու խնդիրները: Վերաբերմունքի հարցը դեպի բուրժուական կուսակցությունները Ռ. Ս. Դ. Բ. Կուսակցության 4-րդ և 5-րդ համագումարներում:

## II. ԱԳՐԱՐԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

Բոլշևիկների ագրարային ծրագրի պատմությունը, հին ծրագրի (II համագումարի) վերանայման անհրաժեշտությունը: Գյուղի կապիտալիստական զարգացման յերկու ուղիները («ամերիկական» և «պրուսական»):

Պրոլետարիատի և գյուղացիության պայքարն Ռուսաստանում ագրարային հարցի լուծման հեղափոխական ուղիի համար:
Բոլշևիկների ագրարային ծրագիրը, որպես պրոլետարիատի ինքնուրույն խնդիրների ձևակերպումն, պրոլետարիատի, որը չի կապում սոցիալիզմի բախտը բուրժուական հեղափոխության այս կամ այն ելքի հետ, սակայն վճռականորեն պայքարում է ագրարային հեղաշրջման ըստ կարելույն բարեհաջող ելքի համար՝ կալվածատիրական հողատիրության գյուղացիական զրման, մաքրման համար:: Ագրարային հեղաշրջման կապը քաղաքականի հետ: Կալվածատիրական հեղափոխական կոմիտեները: Հողի ազգայնացումը, որպես բուրժուա-դեմոկրատական հեղափոխության միջոցառում, որ ամենից ավելի ռադիկալ կերպով (արմատապես) ոչնչացնում է կիսաճորտատիրական հարաբերությունները գյուղում և բարձրացնում գյուղացիության հեղափոխական կռիվը: Հողի ազգայնացման նշանակությունը դեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստականի վերածելու համար: Ազգայնացումը սոցիալիզմի պայմաններում: «Բաժանարարների» (разделисты) ծրագրի քննադատությունը Լենինի կողմից:



Մունիցիպալիզացիայի մենշևիկյան ծրագիրը, որպես հեղափոխության հաղթանակին չհավատալու արտահայտություն: Ագրարա-գյուղացիական հարցը ՌՍԴԲԿ IV (միացնող) համագումարում: Բոլշևիկների և մենշևիկների ագրարային ծրագրերի կապը նրանց հիմնական ստրատեգիական դրույթների հետ և այդ ծրագրների պատմական ստուգումն հեղափոխության ընթացքում:

Էսէռների ագրարային ծրագիրը: Նրա քննադատությունը Լենինի կողմից: Հողի հավասար բաժանման պրինցիպն և նրա օբյեկտիվ նշանակությունը:

## III. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Լենինի պայքարն յերկու ֆրոնտով կուսակցության մեջ և հաշտվողականության դեմ բոլշևիկների շարքերում: III համագումարը, նրա դերն ու նշանակությունը: Ներկուսակցական դեմոկրատիայի հարցերը: Կուսակցության կանոնադրությունը: Ընդհատակյա դրությունից դուրս գալն և կուսակցության ընդհատակյա գործունե-

յության պահպանումը : Բոլշևիկյան մա–
մուլը—լեգալ և անլեգալ : Դեմոկրատական
ցենտրալիզմն և կյանքի մեջ այն անցկացնե–
լու պայմանները : Տամմերֆորսի կոնֆերան-
սը : Մենշևիկների հետ միանալը, փորձե
միասնական Փրոնտի տակտիկա, բանվորնե–
րին մենշևիկների ձեռքից նվաճելու նպատա–
կով : Ազգային սոցիալ-դեմոկրատական կազ-
մակերպությունների հետ միանալը : ՌՍԴ
ԲԿ IV և V համագումարի նշանակությունը :
Բոլշևիկներն և արհմիությունների խնդիր-
ները : Արհմիությունների մենշևիկյան չե-
զոքությունը : Լիկվիդատորության սերմե-
րը մենշևիկների մոտ («բանվորական համա-
գումար») և բոլշևիկների դիրքը : Աշ-
խատանք բանակում : Բոլշևիկների ռազմա-
կան կազմակերպությունները : Բոլշևիկնե-
րը Շտուտգարտի կոնգրեսում :

## IV. ԲՈԼՇԵՎԻԶՄՆ ՅԵՎ ԱՌԱՋԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԸ

*Բոլշևիզմի ծրագրային և տակտիկական հայացքների ստուգումը մասսաների պայքարում : Պրոլետարիատի ղեկավարությամբ պրոլետարիատին գյուղացիության միու-*



*թյան վերաբերմամբ բոլշևիզմի գաղափարների գործնական ստուգումն : Զինված ապստամբության փորձը : Դեկտեմբերյան ապստամբության դասերն ու նրա պարտության պատճառները : Խորհուրդների փորձը : Մասսայական պայքարի ղեկավարության փորձը : Պարտության պատճառները :*

1905—1907 *թվականների հեղափոխությունը որպես գլխավոր ռեպետիցիա* 1917 *թվի հեղափոխության :* 1905–1907 *թվականների հեղափոխության միջազգային նշանակությունը և նրա ազդեցությունն Արևմուտքում (Ավստրիա, Գերմանիա, Բելգիա) ու Արևելքում (Պարսկաստան, Տաճկաստան, Չինաստան) :*

4-ՐԴ ԹԵՄԱ

## ԲՈԼՇԵՎԻԶՄՆ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՅԵՎ ՎԵՐԵԼՔԻ ՏԱՐԻՆԵՐՈՒՄ (ՖՐԱԿՑԻԱՅԻՑ ԴԵՊԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ)

### 1. ԲՈԼՇԵՎԻԶՄԻ ՏԱԿՏԻԿԱՆ ՀՈՒՆԻՍՅԵՐԵՔՅԱՆ ՌԵԺԻՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

*Հունիսյերեքյան ռեժիմի էությունը և ստոլիպինյան ագրարային ռեֆորմի գնահատականը բոլշևիզմի կողմից, որպես ձև*

մի քայլ, Ռուսաստանը բուրժուական միապետության դարձնելու ուղղությամբ: Ցարիզմի անընդունակությունն Ռուսաստանի կապիտալիստական զարգացման խնդիրը լուծելու և դեմոկրատական նոր հեղափոխության անխուսափելիությունը: 1908 թվի դեկտեմբերյան կոնֆերենցիան ընթացիկ մոմենտի մասին: Նահանջի տակտիկան ապագա նոր վերելքի նախապատրաստվելու համար: Լեգալ հնարավորությունների օգտագործումը: Կուսակցության լեգալ և անլեգալ աշխատանքի զուգակցությունը:

Բոլշևիկյան տակտիկան III Դումայի մասին յեղած հարցում (Դումայի ամբիոնի օգտագործումը) և պայքար բոյկոտիստների դեմ: Վերաբերմունքը դեպի արհմիություններ (լեգալ և անլեգալ արհմիություններ): Լեգալ կուսակցական ղեկավարությունը բանվորական կազմակերպությունների:

Բոլշևիկների պայքարն յերկու ֆրոնտում պրոլետարական ազգային քաղաքականության համար:



## II. ԲՈԼՇԵՎԻԶՄԻ ՊԱՅՔԱՐՆ ՅԵՐԿՈՒ ՖՐՈՆՏՈՒՄ ՅԵՎ ՀԱՇՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Ներկուսակցական շփոթ ռեակցիայի տարիներում: Լիկվիդատորությունը— բուրժուազիայի ազդեցության արտահայտություն պրոլետարիատի շարքերում: Լիկվիդատորների գնահատությունը, վորի համաձայն ստոլիպինշչինայի շրջանը դիտվում է վորպես վերջավորված փոխանցումն բուրժուական մոնարխիայի, և նրանց հրաժարումն հեղափոխական ծրագրից ու հին կուսակցությունից: Լիկվիդատորներն և ստոլիպինյան «բանվորական» կուսակցության կառուցումը, վոր անց եր կացնում լիբերալ «բանվորական» քաղաքականություն:

Ոտզովիզմը, Ուլտիմատիզմն ու վպերյոդականությունը վորպես թաքնված լիկվիդատորություն («ձախից»): Հեղափոխական ալիքի անկման ու ցարիզմի համեմատական ստաբիլիզացիայի թերագնահատումը: Հեղափոխության վերելքին համապատասխանող պայքարի լոզունգները կուսակցության վզին կապելը: Լեգալ հնարավորու-

թյուններն օգտագործելուց հրաժարվելը: «Ձախերի» աղանդավորություն: Ռևիզիա մարքսիզմի փիլիսոփայական հիմունքների— դիալեկտիկական մատերիալիզմի, և նրա փոխարինումը իդեալիստական փիլիսոփայությամբ (էմպիրիոմոնիզմ և էմպիրիոկրիտիցիզմ): «Աստվածորոնումն» և «աստվածաստեղծումն»: «Ձախ» բոլշևիկների ֆրակցիայի գաղափարական, տակտիկական և կազմակերպչական ձևավորումը «Վպերյոդ» խմբակի մեջ:

Հաշտվողականները — լիկվիդատորության օժանդակները աջից և «ձախից»:

«Արտաֆրակցիոն» միավորություններ:

Տրոցկու և նրա խմբակի (Վիեննայի «Պրավդա») հաշտվողականության անսկզբունքություն: Հաշտվողականությունը բոլշևիկների շարքերում (այսպես կոչված «բոլշևիկ-կուսակցականներ»):

Բոլշևիզմի պայքարը երկու ֆրոնտում— լիկվիդատորության դեմ աջից ու «ձախից» և հաշտվողականության դեմ: Պայքար հեղափոխական թեորիայի համար: Պայքար աջ



ու «ձախ» վտանգի դեմ և պայքարի ծանրության կենտրոնի փոխադրումն առաջին շըրջանում՝ դեպի ձախ, երկրորդ շրջանում՝ դեպի աջ: «Պրոլետարի» ընդլայնված խմբագրության 1909 թվի որոշումները:

Մենշևիկ-կուսակցականներն և բոլշևիկների դաշինքը նրանց հետ լիկվիդատորների դեմ պայքարում: 1910 թվի հունվարյան պլենումն և հաշտվողական իլյուզիաների խորտակումը:

## III. ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ (ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ,

(Строительство)

Բոլշևիզմի պայքարը կուսակցությունը վերականգնելու համար: Կուսակցության համառուսական կոնֆերենցիայի նախապատրաստությունը: Ֆրակցիայից դեպի կուսակցություն: 1912 թվի Պրագայի կոնֆերենցիան վորպես բոլշևիկյան կուսակցության առանձնացումն ու կազմակերպչական ձևավորման պրոցեսի ավարտումն: Դումայի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի պառակտումը վորպես բոլշևիկյան կուսակցության ձևավորման մոմենտներից մեկը: Կուսակ-

ցության ամուր բազայի ստեղծումը ֆաբրիկա-գործարանային ձեռնարկություններում: Մանր բուրժուական ինտելիգենցիայի տեղատվությունն և կուսակցական ղեկավար կադրերի ստեղծումը բանվորներից: Կուսակցական բջիջի դերը նոր կադրերի դաստիարակության և ներկուսակցական բանվորական դեմոկրատիայի ապահովման խնդրում: Բոլշևիկյան կուսակցության պայքարը բոլոր ազգությունների բանվորներին միասնական պրոլետարական կազմակերպությունների մեջ միացնելու համար: 1913 թվի կուսակցական խորհրդակցությունների դերը բոլշևիկյան կուսակցության ամրապնդման գործում: Բրյուսելի խորհրդակցությունը:

## IV. ՊԱՅՔԱՐ ՈԳՈՍՏՈՍՅԱՆ ԲԼՈԿԻ ԴԵՄ

Լիկվիդատորության պարտությունը վերելքի տարիներում և լիկվիդատորների միավորման մանյովրները: Լիկվիդատորների փորձերն ստեղծելու ռեֆորմիստական կուսակցություն, որ հենված լինի բանվորական արիստոկրատիայի վրա: Լիկվիդատորական լոզունգներ՝ «կոալիցիաների ազատություն» և «պետիցիոն կամպանիա»-ի նշանակությունը: Լիկվիդատորության բացահայտ (Լեվիցկիյ, Յեժով) և լիկվիդատորություն՝ քողարկված («գոլոսովցիները»): Բլոկի փորձեր էսերների հետ ռադիկալ-դեմոկրատական կուսակցություն ստեղծելու համար: Տրոցկու «Վեննայի ակումբը» («Венский клуб»), որպես արտաֆրակցիոն հակակուսակցական տարրերի միավորման կենտրոն և որպես լիկվիդատորության «ձախ» այլաձևությունը: Տրոցկու անցնելը լիկվիդատորների կողմը տակտիկական հարցերում: Ոգոստոսյան բլոկը որպես աջերի ու «ձախերի» բլոկ ստեղծելու անսկզբունք մի փորձ լիկվիդատորական պլատֆորմի հողի վրա և որպես փորձ խորտակելու կուսակցության միությունը, որ իրագործվել էր Պրագայի կոնֆերենցիայի կողմից: Ոգոստոսյան բլոկի և Բրյուսելյան խորհրդակցության կրախը, որպես հաղթանակ կուսակցության միասնության լենինյան հասկացողության և տրոցկիստական «ֆրակցիաների ազատության» իր գաղափարի սնանկությունը: Ոգոստոսյան բլոկի փոր-

ձը, 1926 թվի տրոցկիստա–զինովյեվական բլոկը և 1930 թվի աջ ու «ձախական» բլոկը:

## V. ՀԵԳԵՄՈՆԻԱՅԻ ՆՎԱՃՈՒՄԸ ԲԱՅԼՇԵՎԻԶՄԻ ԿՈՂՄԻՑ

(Բանվորական շարժման մեջ):

*Գործադուլային բանվորական շարժում: Քաղաքական և տնտեսական պայքարի միացումը: Լենայի գնդակահարությունը և նրա նշանակությունը բանվորական շարժման մեջ: Բայլշևիզմի տակտիկան վերելքի շրջանում և «յերեք կետերի»* (трех китов) *լոզունգը: Բայլշևիկների լեգալ գործունեությունը (մամուլ, Դումայի Ֆրակցիա, արհմիություններ, ապահովագրական կամպանիա): Բայլշևիզմի ազդեցության աճումը բանվորական մասսաների մեջ և լիկվիդատորության կրախը: Լիկվիդատորների արտաքսումը արհմիություններից: Լիկվիդատորական «օգոստյան կոնֆերանսի» պրովալը (խորտակումը): «Վպերյոդ» խմբակի քայքայումը վերելքի տարիներում, որպես վկայություն օտզովիզմի լիակատար սնանկության: Գիտակից բանվորների մեծամասնության նվաճումը բայլշևիկների կողմից (հանգանակությունների 4/5 հօգուտ բայլշևիկյան բանվորական մամուլի, IV Դումայի ընտրությունները բանվորական կուրիայով, արհմիությունների նվաճումը): Բայլշևիկյան «Պրավդա» թերթը—1912-1914 թվականների բանվորական շարժման շտաբ: Բայլշևիկյան մամուլը որպես մասսաների կազմակերպիչ:*



## VI. ԲԱՅԼՇԵՎԻԶՄԸ ՅԵՎ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՈՒ ՎԵՐԵԼՔԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՓՈՐՁԸ

*Ռեակցիայի շրջանի նշանակությունը Կոմինտերնի համար, որպես նոր հարձակման պատրաստվելու համար նահանջի տակտիկա կիրառելու մի փորձ: Կոմինտերնը պայքարի լեգալ ու անլեգալ ձևերի զուգակցության, բուրժուական պառլամենտարիզմը հեղափոխականորեն օգտագործելու և ռեակցիոն արհմիությունների մեջ աշխատանք տանելու մասին: «Ձախ» բայկոտականների սխալները Կոմինտերնում, (Բորդիգան, Կոմունիստական բանվորական կուսակցությունը Գերմանիայում և ուրիշները): Պայքար յերկու ֆրոնտում և հաշտվողականության դեմ:*

Միասնական ֆրոնտի տակտիկան ռեակցիայի ու վերելքի շրջանի փորձի լույսի տակ։ Պայքար մասսաները նվաճելու համար, մասսայական կռիվները ղեկավարելու համար։ Բոլշևիկների մասսայական կուսակցություն դառնալը։ Բոլշևիզմը II Ինտերնացիոնալի շարքերում (Կոպենհագեն 1910 թ., Բազել 1912 թ.)։ Ձախ տարրերի միավորումը II Ինտերնացիոնալի ներսում։

Յերկրորդ դասախոսություն

## ԲՈԼՇԵՎԻԶՄԸ 2-ՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՇԱՐՔԵՐՈՒՄ

5-ՐԴ ԹԵՄԱ

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐՈՒՄ։

### 1. *ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ԲՈԼՇԵՎԻԶՄԻ ԿՈՂՄԻՑ*

*Լենինի ուսմունքն իմպերիալիզմի մասին, վորպես կապիտալիզմի վերջին էտապի։ Իմպերիալիզմը վորպես փտող կապիտալիզմ և «սոցիալիստական հեղափոխության նախօրյակ»։ Կապիտալիզմի անհամաչափ զարգացման օրենքը իմպերիալիզմի ժամանակ։ Թույլ օղակի պատռումն իմպերիալիստական շղթայի մեջ։ Լենինի ուսմունքը սոցիալիզմի հաղթանակի հնարավորության մասին մի յերկրում։ Կաուցկու «ուլտրաիմպերիալիզմի» թեորիայի հակահեղափոխական եյությունը։ Կաուցկու «ուլտրաիմպերիալիզմի» թեորիան և «կազմակերպված կապիտալիզմի» սոցիալ-դեմոկրատական թեորիան ու վերջինիս կապակցությունն աջ օպորտունիստական հայացքների հետ կազմակերպված կապիտալիզմի մասին։ «Ձախ» բոլշևիկները (Բուխարին, Պյատակով) «զուտ» իմպերիալիզմի և զուտ սոցիալիստական հեղափոխության մասին։ Ազգային-ազատագրական շարժման դերը իմպերիալիզմի շրջանում։*

*1914 թվականի պատերազմի գնահատականը բոլշևիզմի կողմից, վորպես իմպերիալիստական պատերազմի։ Կ. Կ.-ի 1914 թվի մանիֆեստը։ II Ինտերնացիոնալն ու պատերազմի պրոբլեմը։ Շտուտգարտի և Բազելի կոնգրեսները պատերազմի մասին։ Պատերազմն և II Ինտերնացիոնալի կրախը։*

II Ինտերնացիոնալի կրախի պատճառները։ Միջազգային և Ռուսաստանի շարժման մեջ յերեք հիմնական հոսանքների առաջանալը՝ սոցիալ-շովինիզմի, ցենտրիզմի, իսկական ինտերնացիոնալիզմի։ Այդ հոսանքների կապակցությունը մինչ պատերազմյան պայքարի հետ բանվորական շարժման մեջ։

## II. ԲԱՅԼՇԵՎԻԶՄԻ ՏԱԿՏԻԿԱՆ ՅԵՎ ՆՐԱ ԼՈԶՈՒՆԳՆԵՐԸ

Արտասահմանյան սեկցիաների Բեռնի կոնֆերենցիան 1915 թվին։ Բայլշևիզմի հիմնական լոզունգները՝ իմպերիալիստական պատերազմը վերածել քաղաքացիական պատերազմի, պարտությունն իր կառավարության, յեղբայրացումն փորձեր լոզունգ. հակաիմպերիալիստական աշխատանքի զինվորների մեջ։ Պայքար զինաթափման լոզունգի դեմ։ [illegible] [illegible] պայքարելու համար, փորձեցեք իմպերիալիստական պատերազմը վերածելի քաղաքացիական պատերազմի։

Պայքար սոցիալ-շովինիզմի և ցենտրիզմի դեմ։ Լենինի պայքարը տրոցկիզմի դեմ։ Տրոցկու լոզունգները. «Յեվրոպայի Միա-



ցյալ նահանգներ», «Պայքար դեմոկրատական խաղաղության համար»։ Պայքար թեքում-ների դեմ բայլշևիզմի ներսում, տակտիկա-կան ու տեսական հարցերի վերաբերմամբ։ Սեփական կառավարության պարտության լոզունգի և ազգերի ինքնորոշման իրավուն-քի ժխտումը «ձախ» բայլշևիկների կողմից, Նրանց պաշտպանությունը՝ դեմոկրատական խաղաղության ցենտրիստական լոզունգի։ Նրանց կողմից Մարքսի ուսմունքի խեղա-թյունում՝ պետության մասին և սոցիալիս-տական հեղափոխության [illegible] բնույթը չհասկանալը։

## III. ՊԱՅՔԱՐ III ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՀԱՄԱՐ

Պառակտման և գլխավոր սահմանազոր-ման պրոբլեմը միջազգային բանվորական շարժման մեջ (բայլշևիկյան պահանջը՝ կազմակերպչական լիակատար խզում սոցի-ալ-շովինիստների ու ցենտրիստների հետ)։ Ղեկավարող ու կազմակերպող նոր ինտեր-նացիոնալական կենտրոնի անհրաժեշտու-թյունը։ Պայքար ցենտրիստների ու ձախ-ցենտրիստների (Տրոցկի) դեմ։ Պայքար սոցիալ-շովինիստների ու ձախերի մեջ դը-

տանվող ցենտրիստների հետ պառակտվելու անհրաժեշտությունը չհասկանալու դեմ: III Ինտերնացիոնալի լոզունգը:

III Ինտերնացիոնալի համար մղվող պայքարի ետապները: Պատանեկության ու կանանց միջազգային կոնֆերենցիաները: Ցիմմերվալդն ու Կինտալը: Երեք հոսանք Ցիմմերվալդում: III-րդ Ինտերնացիոնալի սաղմը: Բոլշևիկների և Լենինի դերը «Ցիմմերվալդյան ձախ»-ի մեջ: Բոլշևիկների ղեկավարող դերը միջազգային բանվորական հեղափոխական շարժման մեջ պատերազմի շրջանում:

## IV. ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ռուսաստանի հեղափոխության հեռանկարների գնահատականը բոլշևիկների, մենշևիկների և Տրոցկու կողմից:

Տվյալ ետապում վերաճման լենինյան ըմբռնումը: Բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը, որ Ռուսաստանում վերաճում է սոցիալիստականի, որպես միջազգային սոցիալիստական հեղափոխության բաղկացուցիչ մասը: Վերաճման լոզունգի կապակցությունը մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորության հետ: Իմպերիալիզմի «թույլ ողակն»—Ռուսաստանն է (կապիտալիզմի միջակ—թույլ զարգացում): Կամենևյան սահմանափակումն ապագա հեղափոխությունը դեմոկրատական խնդիրներով: Տրոցկու ցատկումը դեմոկրատական հեղափոխության ետապի վրայից:

Բոլշևիկյան կազմակերպությունների դրությունն ու դիրքն Ռուսաստանում պատերազմի սկզբին: Բոլշևիկների Դումայի ֆրակցիայի աշխատանքը, նրա ձերբակալումն ու դատը: Պայքար կամենևյան ոպորտունիստական դիրքի և «Բոժիլցինների» Լենինի դեմ բլոկ ստեղծելու կազմակերպչական փորձերի դեմ: Պայքար հաշտվողականության դեմ տեղական կազմակերպությունների մեջ: Պայքար գվոզդևշչինայի (гвоздевщина) դեմ և բոյկոտ ռազմա-արդյունաբերական կոմիտեներին: Բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքի ծավալումն 1915 թվի աշնանից: Բոլշևիզմի ազդեցության աճումը

բանվորական մասսաների մեջ։ Բոլշևիզմի տակտիկան հեղափոխական աճող կրիզիսի պայմաններում և մասսայական շարժման ղեկավարությունը։ Աշխատանք բանակում և նավատորմում։

## V. ՇՐՋԱՆԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Բոլշևիզմի տակտիկայի փորձը պատերազմի շրջանում համաշխարհային կոմունիստական շարժման համար։ Կոմինտերնը պատերազմական նոր վտանգի մասին, իմպերիալիզմի «զինաթափման» ձգտումների և սոցիալ-պացիֆիզմի մասին։ Դեմոկրատական «միացյալ նահանգների» լոզունգը և Ազգերի Լիգայի պրակտիկան։ Ուլտրաիմպերիալիզմի թեորիան և կազմակերպված կապիտալիզմի աջ օպորտյունիստական թեորիան։ Բոլշևիկների անլեգալ գործունեության փորձը Կոմինտերնի սեկցիաների համար (հատկապես ֆրանսիական կոմունիստների աշխատանքը պատերազմի ժամանակ Մարոկկոյում)։



Ե-ՐԴ ԹԵՄԱ.

# ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1917 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(Փետրվարից դեպի Հոկտեմբեր)

## I. Պայքար հեղափոխության լենինյան գնահատականի համար և պրոլետարիատի խնդիրները նրա մեջ

Կուսակցությունը փետրվարյան հեղափոխությունից հետո։ Օպորտյունիստական տատանումներ բոլշևիկյան շարքերում (վերաբերմունքի հարցը դեպի ժամանակավոր կառավարությունն ու պատերազմը) և այդ տատանումների կապակցությունը մանր-բուրժուական կուսակցությունների բռնած դիրքի հետ։ Բանվորական և զինվորական պատգամավորների խորհուրդներն և երկիշխանությունը որպես Փետրվարյան հեղափոխության բնորոշ առանձնահատկություն։ Երկիշխանությու-

նը վորպես դեպքերի ընթացքով յուրահատուկ կերպով իրացված բոլշևիզմի լոզունգը՝ պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի մասին: «Բարեխիղճ պաշտպանողականությունն» (оборончество) և նրա դասակարգային արմատները: Խորհուրդների կողմից իշխանության կամավոր հանձնումը բուրժուական ժամանակավոր կառավարության, վորպես արդյունք մենշևիկների և էսէռների գերազանցության նրանց (խորհուրդների) մեջ:

Վ. Ի. Լենինի ժամանումը:

Ապրիլյան թեզիսներն և ապրիլյան կոնֆերենցիան վորպես բեկման մոմենտ դեպի կուսակցության նոր որիյենտացիան: Ապրիլյան թեզիսների համաշխարհային-պատմական նշանակությունը:

Մոմենտի առանձնահատկությունն Ռուսաստանում՝ «Փոխանցումն հեղափոխության առաջին էտապից դեպի նրա յերկրորդ էտապը, վորն իշխանությունը պիտի տա պրոլետարիատի և գյուղացիության չքավոր խավերի ձեռքը»: (Լենին):



Բուրժուա-դեմոկրատական հեղափոխության սոցիալիստական վերաճման լենինյան պլանն և պայքարն յերկու ֆրոնտում: Փետրվարյան հեղափոխության առանձնահատկության չհասկանալը աջ բոլշևիկների կողմից (Կամենյեվ և ուրիշները): Կամենյևի աջ—ոպորտունիստական գիծը՝ բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը մինչև իր վախճանին հասցնելու որիյենտացիան:

Խորհուրդները վորպես պետական իշխանության նոր տիպ: Վո՛չ թե սոցիալիզմի անհապաղ իրականացումն, այլ մի շարք փոխանցման միջոցներ:

Պրոլետարիատի դաշնակցի պրոբլեմը պրոլետարական հեղափոխության մեջ: Գյուղական չքավորությունը— պրոլետարիատի վստահելի դաշնակիցն է: Իշխանության համար պրոլետարիատի մղած պայքարի էտապում միջակի վորոշ աջակցությունն և նրա (միջակի) տատանումների հաղթահարումը: Ճնշված ազգությունները վորպես պրոլետարիատի դաշնակիցներ հեղափոխության մեջ: Պյատակովի սխալներն ազգային հարցում:

Տրոցկին բոլշևիզմի «վերազինման» մասին 1917 թ. ապրիլին:

## II. ԲՈԼՇԵՎԻԶՄԻ ՏԱԿՏԻԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

(Փետրվարից մինչև հուլիս)

*Մոմենտի գնահատումը բոլշևիկների կողմից՝ երկիշխանություն, մասսաների մանր-բուրժուական իլյուզիաները, Հեղափոխության խաղաղ զարգացման և իշխանությունը խորհուրդներին անցնելու հնարավորությունը: «Ամբողջ իշխանությունը խորհուրդներին» լոզունգը և նրա նշանակությունը: Պայքար մեծամասնության համար խորհուրդներում:*

*Պրոլետարական կոմունիստական տարրերի անջատումը մանր-բուրժուականներից— մոմենտի կենտրոնական խնդիրն է: Պայքար «միավորման» տենդենցների դեմ: Բոլշևիկյան տակտիկայի հիմնական գիծն է՝ համբերատար ու սիստեմատիկ պրոպագանդա մասսաների մեջ իշխանությունը խորհուրդներին անցնելու անհրաժեշտության և*



*հեռանկար լոզունգների մասին՝ «Հողը՝ գյուղացիներին», «Հացը՝ բանվորներին», «Խաղաղություն աշխատավորներին»: Պայքար բանվորական վերահսկողության (կոնտրոլի) համար: Ժամանակավոր կառավարությունը զինված ուժի միջոցով անհապաղ տապալելու անհնար լինելը: «Ո՛չ մի աջակցություն ժամանակավոր կառավարությանը», պարզաբանել նրա բոլոր խոստումների լիակատար ստությունը, առանձնապես անեքսիաներից հրաժարվելու վերաբերմամբ» (Լենին):*

*Պայքար յերկու ֆրոնտում՝ աջ բոլշևիկների (Կամենևի) սխալների դեմ և «ձախերի» դեմ Պետերբուրգի կոմիտեյից (Բագդատյեվ և ուրիշները) (առաջարկությունները՝ անմիջապես տապալել ժամանակավոր կառավարությունը):*

*Ապրիլյան ցույցի նշանակությունը ժամանակավոր կառավարության իմպերիալիստական քաղաքականությունը մերկացնելու գործում: Հունիսյան առաջխաղացումը ջախջախվում: Բոլշևիկների պայքարը բանակը կազմակերպելու և զինվորական*

մասսաների համար: Կուսակցության զին-վորական կազմակերպությունների հունիս-յան կոնֆերենցիան:

## III. ԲՈԼՇԵՎԻԶՄԻ ՏԱԿՏԻԿԱՆ ԶԻՆՎԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՇՐՋԱՆՈՒՄ

(Հուլիսյան օրերից մինչև Հոկտեմբերը)

Հունիսի 18-ի առաջխաղացումը և նրա նշանակությունը: Կուսակցության տակտիկան հուլիսյան օրերին: Մոմենտի գնահատությունը հուլիսից հետո — իշխանության անցնելը հակահեղափոխության ձեռքը. Հեղափոխության խաղաղ զարգացման հնարավորության և յերկիշխանության վախճանը: Բոլշևիկյան տակտիկայի փոփոխումը հուլիսից հետո:

Կուսակցության VI համագումարը: Զինված ապստամբության կուրսը. պայքարի լոզունգներ բուրժուազիայի հակահեղափոխական դիկտատուրայի դեմ, իշխանությունը պրոլետարիատի և գյուղացիական չքավորության ձեռքն անցնելու համար: «Ամբողջ իշխանությունը խորհուրդներին» լո-



լոզունգի ժամանակավոր վերացումը: Պայքար համագումարում նոր տակտիկայի համար:

Կորնիլովշչինան վորպես փորձ կալվածատերերի ու բուրժուազիայի կողմից ցրելու խորհուրդներն ու կատարելապես ճնշելու հեղափոխությունը: Կերենշչինայի անանկու-թյունը: Կուսակցության տակտիկայի ա-ռանձնահատկությունը Կորնիլովշչինայի դեմ մղվող պայքարում (վո՛չ մի աջակցու-թյուն Կերենսկուն, մասսաների զինումը Կորնիլովի դեմ պայքարելու համար): Սխ-խալներն այս խնդրում, վոր թույլ են տվել բուլղարական կոմկուսակցությունը 1923 թվին և լեհական կոմկուսակցությունը՝ 1926 թվին: Հեղափոխական կրիզիսի աճը: Տնտեսական կրիզիս, սաբոտաժ, կատա-ստրոֆայի մերձեցումը: Մասսաների մոբի-լիզացիան պայքարի բոլշևիկյան լոզունգ-ների շուրջը՝ բանվորական վերահսկողու-թյան (կոնտրոլի) համար, տնտեսական կրի-զիսից իրապես հեղափոխական ելքի հա-մար: Բոլշևիկների տնտեսական ծրագիրը: Կապիտալիստների արշավը հեղափոխության տնտեսական նվաճումների դեմ: Տնտեսա-

կան կուլակների վերացումը քաղաքականի: Արհեստակցական միությունների և փաբրիկա-գործարանային կոմիտեների տիրապետելը: Խորհուրդների գրավումը բոլշևիկների կողմից: Գյուղացիական ապստամբությունների և ազգային շարժման աճումը ժամանակավոր կառավարության իմպերիալիստական և մեծապետական քաղաքականության դեմ: Կառավարական իշխանության քայքայումը: Մենշևիկների և էսեռների դավաճանական դերն և մասսաների հեռանալը նրանցից: «Ամբողջ իշխանությունը խորհուրդներին» լոզունգը վորպես զինված ապստամբության լոզունգ և վորպես պրոլետարիատի դիկտատուրայի լոզունգ: Բոյկոտ նախապառլամենտին:

Պայքար կուսակցության մեջ գրոհ կազմակերպելու տակտիկայի համար: Կուսակցության կողմից ապստամբության անմիջական նախապատրաստություն: Կուսակցության պայքարն աջ բոլշևիկների (Կամենյեվ-Զինովյեվ) (շտրեյկբրեխերություն) դեմ: Կուսակցության դերը և Հոկտեմբերի նախապատրաստության գործում նրա վարած տակտիկայի խեղաթյուրումը Տրոցկու



կողմից («Հոկտեմբերի դասերը»): Կուսշինարարությունը 1917 թվին: Անլեգալ ձևերից լեգալ ձևերի անցնելը: Պայքար «միավորման» տենդենցների դեմ կենտրոնում և տեղերում, ինտերնացիոնալիստների առանձին խմբերի և «մեժռայոնցիների» բոլշևիկների կողմն անցնելը. կուսակցության աճումը գործարաններում ու զինվորական մասերում, կուսակցության ագիտացիոն գործունեությունը: Սահմանադիր ժողովի ընտրական կամպանիայի նախապատրաստությունը և մունիցիպալ ընտրությունները:

## IV. ՇՐՋԱՆԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

1917 թվի բոլշևիկյան տակտիկայի հիմնական գիծը՝ անջատելու բանվորներին ու մանր-բուրժուական մասսաներին հաշտվողական կուսակցություններից և մասսաներին իրենց սեփական փորձի հիման վրա աստիճանաբար հարել բոլշևիկյան լոզունգներին — վորպես մի գիծ մասսաների անբաժան դեկավարության՝ բոլշևիկյան կուսակցության կողմից: Հեղափոխական կրիզիսի աճն և կոմինտերնի գործադիր կո-

մասին XI-րդ պլենումի դրույթներն այդ հարցում: Լենինի «Պետությունն ու հեղափոխությունը» և այդ աշխատության տեղը բայլշևիզմի պատմության մեջ:

7-ՐԴ ԹԵՄԱ

## ԲԱՅԼՇԵՎԻԶՄԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՆՎԱՃՄԱՆ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

(նոյեմբեր 1917 թ. ամառն 1918 թ.)

### I. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

*Սոցիալիստական հեղափոխությունն 1917 թվի հոկտեմբերին, վոր միաժամանակ ավարտում է բուրժուա-դեմոկրատական խնդիրները: Լենինի ստրատեգիական պլանը: Բայլշևիզմի ստրատեգիական լոզունգները գյուղացիության վերաբերմամբ՝ Հոկտեմբերի նախապատրաստության շրջանում, Հոկտեմբերի շրջանում և նրանից (հոկտեմբերից) հետո սկզբնական շրջանում: Պրոլետարիատի և ամենաչքավոր գյուղացիության դիկտատուրան:*

*Հոկտեմբերը վորպես համաշխարհային իմպերիալիզմի շղթայի ամենաթույլ ողակի պատռումն: Սոցիալիստական հեղափոխությունն Ռուսաստանում վորպես սոցիալիստական հեղափոխությունների երախայրի սկիզբն ամբողջ աշխարհում: Միջազգային հեղափոխական շարժումն Հոկտեմբերի շրջանում: Հոկտեմբերի համաշխարհային պատմական նշանակությունը:*

*«Ձախ» և աջ կապիտուլյանտները Հոկտեմբերի գնահատության խնդրում: Մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորության ժխտումը: Հոկտեմբերի սոցիալիստական բնույթին չհավատալը: Կամենյևի և Զինովյեվի հոկտեմբերյան սխալների կապակցությունն օպոզիցիայի տրոցկիստական դրույթների հետ 1925–1927 թ. թ.: «Յերկու հեղափոխության» թեորիան Հոկտեմբերի մեջ: Հոկտեմբերի մեխանիստական կոնցեպցիաները: Հոկտեմբերի սոցիալ-դեմոկրատական գնահատականը:*

*Հոկտեմբերի առանձնահատկություններն ազգային շրջաններում (ռայոն) և մեծապետական ու ազգային դեմոկրատական խեղաթյուրումներն այս հարցում:*

## II. ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄՆ ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ ՅԵՎ ՊԱՅՔԱՐ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Խորհրդային իշխանության «հաղթական» երթը: Պատերազմից դուրս գալը (դեկրետ խաղաղության մասին), վորպես պրոլետարական սոցիալիստական խնդիրների կատարում: Հողի սոցիալիզացիայի դեկրետը վորպես համաձայնության արտահայտում գյուղացիության հետ տվյալ էտապում: Քաղաքացիական կռվի սկիզբը (Կերենսկու և Կրասնովի արշավը Պետրոգրադի վրա, յունկերների ապստամբությունը, ստավկայի հակահեղափոխական գործունեությունը), զինված ընդհարումներ Մոսկվայում և հակահեղափոխության պաշտպանությունը մանր-բուրժուական կուսակցությունների կողմից. (Հայրենիքի և հեղափոխության փրկության Կոմիտե):

Աջ բոլշևիկների կապիտուլյանտական գիծը իշխանության հարցում: Մանր-բուրժուական կուսակցությունների հետ բլոկ կազմած նրանց պայքարը կուսակցության ու Լենինի դեմ, ստեղծելու համար միատարր



սոցիալիստական մի կառավարություն, կազմված՝ էնեսներից մինչև բոլշևիկները: Վիկժելի դերը: Բլոկ ձախ էսէռների հետ, բլոկի պայմաններն ու նշանակությունը: «Կոտրումն» հին պետական մեքենայի՝ պայքար սաբոտաժի դեմ և բանվորական ու զինվորական պատգամավորների խորհուրդների իշխանության ստեղծումը: Բանվորական, զինվորական և գյուղացիական պատգամավորների խորհուրդների միաձուլումը, Սահմանադիր ժողովի ցրումը:

## III. ՊԱՅՔԱՐ՝ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Բրեստ-Լիտովսկի բանակցությունները: Լենինի թեզիսները 1918 թվի հունվարի 7-ին հաշտության մասին: Տարաձայնությունները կուսակցության մեջ պատերազմի հարցի առթիվ: «Ձախ» կոմունիստների դերը՝ «հեղափոխական պատերազմի» լոզունգը: Մոսկվայի «ձախ»— կոմունիստական մարզբյուրոյի բանաձևը խորհրդային իշխանության ձևական բնույթի մասին և այն կորցնելը թույլատրելի համարելու մասին: Տրոցկին խաղաղության հարցում (լոզունգ՝

«վո՛չ խաղաղություն, վոչ պատերազմ»): Կուսակցության VII համագումարը Բրեստի խաղաղության հարցում: Լենինյան քննադատությունը «ձախ» կոմունիստների Խորհրդային Իշխանության համաշխարհային հեղափոխության համար ունեցած նշանակության թերագնահատումը, գյուղացիության դերի չհասկանալը, «Շլյախտական» (մանր ազնվական) տեսակետն իմպերիալիզմի դեմ պայքարի հարցում, հեղափոխական պատերազմի ավանտյուրիստական լոզունգը այժմյան պայմաններում: VII համագումարի աշխատանքները, ծրագրի փոփոխության նախագծի քննությունը և կուսակցության վերանվանումը:

«Ձախ» կոմունիստների պառակտիչ գործունեությունը ձախ եսերների հետ միացած: «Ձախ» կոմունիզմի սոցիալական արմատները—կատաղած մանր-բուրժուան: «Ձախ» կոմունիզմի կապակցությունը տրոցկիզմի հետ: Լենինի պայքարը հանգստի (передышка) համար: Կարմիր բանակի կառուցումը:

Բրեստի լոզունգների ճշտության ստու-



գումը հեղափոխության հետագա ընթացքով (Նոյեմբերյան հեղափոխությունը 1918 թվին Գերմանիայում):

## IV. ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐՆ ՅԵՎ ՆՐԱ ԻՐԱՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԵՐԸ

Բուրժուազիային, վորպես դասակարգի, լիկվիդացիայի յենթարկելու խնդիրը: Բանկերի ազգայնացումը, վորպես հարված ֆինանսական կապիտալին: Բանվորական վերահսկողությունը (կոնտրոլ) բանվոր դասակարգի արդյունաբերությունը տիրապետելու առաջին ստադիան է: Արդյունաբերության ազգայնացման անցնելը: «Աստիճանական, բայց հաստատուն ու անշեղ քայլեր դեպի սոցիալիզմը»:

Հինգ տնտեսաձևեր (уклады): Սոցիալիզմն ու պետական կապիտալիզմն ընդդեմ մանրատիրական կապիտալիզմի և մանր-բուրժուական տարերքի: Ոպոզիցիայի 1925–1927 թվականների սխալները պետական կապիտալիզմի հարցում: 1918 թվի գարնան տնտեսական ծրագիրը (հաշվառումը և վերահսկումն (կոնտրոլ), բնակչու-

թյան հարկադրական սինդիկացումն և կոոպերացումն, մասնագետների ներգրավումը): Պայքար «ձախ» կոմունիստների դեմ տնտեսական քաղաքականության հարցերում: Հանգստի (передышка) օգտագործումը: Սոցիալիստական հեղափոխության փոխադրումը գյուղ: Չքավորական կոմիտեներ և չքավորական կոմիտեների շրջանը: Հացի մոնոպոլիան, ապակուլակացման և ինվենտարի բաժանման նշանակությունը պրոլետարական հեղափոխության գյուղ փոխադրելու, գյուղում, հանձին չքավորության, կայուն հենարան ստեղծելու և միջակի հետ դաշինքի հաստատ կարգավորման գործում: Խորհտնտեսությունների, կոմունաների, գյուղատնտեսական արտելների կազմակերպումը: Կոլեկտիվ հողագործության անցնելու առաջին քայլերի փորձն ու դասերը: Ձախ էսէռների ապստամբությունն ու նրա պատճառները:

## V. ՇՐՋԱՆԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Պրոլետարիատի դիկտատուրայի առաջին քայլերի փորձի միջազգային նշանակությունը՝ պետական մեքենայի փլուզման,



սոցիալիստական արտադրության կարգավորման և իշխող դասակարգերի ու նրանց սպառարկումների տիրության շնորհիվ ըստեղծված կրիզիսից հեղափոխականորեն դուրս գալու հարցերում:

## 8-ՐԴ ԹԵՄԱ

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՌՎԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՅԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ

Քաղաքացիական կռվի առաջին էտապը—հակահեղափոխության ներքին ուժերի և կամավորական սպիտակ բանակների առաջ գալը: Սահմանադրականների (ուչրեդելովցիների) «դեմոկրատիան»— կոմուչ դեպի կալվածատիրական— բուրժուական ռեստավրացիա: Հակահեղափոխության դասակարգային հիմունքը: Կուլակային և ունևոր գյուղացիության ու կազաչեստվոյի ռայոնների (շրջանների) դերը հակահեղափոխական բանակների կազմակերպման մեջ: Միջակի տատանումները: Ազգայնական հա-

ղափոխության միացումն մեծամասնական ռուսականի հետ: Ինտերվենցիայի առաջին էտապը— հակահեղափոխությանն ոգնության փորձեր, յերկիր մտցնելով իմպերիալիստական պետությունների զորքերը: Մանր-բուրժուական կուսակցությունները (մենշևիկներն ու էսէռները) Խորհրդային Ռուսաստանի ներսում, վորպես իմպերիալիզմի գործակալներ (ագենտներ) և ինտերվենցիայի պաշտպաններ:

Քաղաքացիական կռվի յերկրորդ էտապը —կամավորական բանակների ռեգուլյար (կանոնավոր) զորք դառնալը, սպիտակ շարժման կազմակերպումը Անտանտի միջոցներով ու քաղաքական ոգնությամբ: Սպիտակ բանակների կազմալուծումը, պարտիզանական շարժում, կուսակցության անլեգալ աշխատանքը:

Խորհրդային Ռուսաստանի պաշտպանության կազմակերպումը: Պարտիզանականությունից կանոնավոր Կարմիր բանակի անցնելը: Կուսակցության ռազմական քաղաքականությունը: Կուսակցության դերը Կարմիր Բանակի ստեղծման գործում: Վեճեր կուսակցության VIII համագումարում



ռազմական շինարարության և դեպի մասնագետները վերաբերմունքի մասին: Խորհըրդային Ռուսաստանի պրոլետարիատի հաղթության պայմանները քաղաքացիական կռվիներում (պրոլետարիատի յերկաթե դիսցիպլինան և նրա հերոսությունը Խորհրդային հանրապետության պաշտպանության գործում, իմպերիալիզմի սեփական զորքերի կազմալուծումը, արևմտայեվրոպական պրոլետարիատի ոգնությունը, միջակի շրջադարձը դեպի Խորհրդային Իշխանությունը, ռեստավրացիայի և կալվածատերերի ու բուրժուազիայի զինվորական դիկտատուրայի դասերի հետևանքով): Կոմունիստական կուսակցության դերը վորպես առաջնորդի և հաղթանակը կազմակերպողի:

## II. ՄԻՋԱԿԻ ՉԵԶՈՔԱՑՈՒՄԻՑ ԴԵՊԻ ԴԱՇԻՆՔ ՆՐԱ ՀԵՏ

### Կուսակցության VIII համագումարն և նրա վորոշումները

Ռազմա-քաղաքական դաշինքի կապը տնտեսականի հետ: Հացի մոնոպոլիան վորպես հարված «մեշոչնիկին» (պարկավորին) ու սպեկուլյանտին: Գյուղի «միջակացու-

մը»։ Չքավորական կոմիտեների լուծարքը։ Հողի ազգայնացման դեկրետը։ Պրոլետարական պետության քաղաքականությունը միջակի վերաբերմամբ՝ ոգնության գործնական միջոցներ և մանր տնտեսությունը խոշոր հանրայնացածի վերածելու պլան։ VIII համագումարի պատմական նշանակությունը միջակին ցույց տրվելիք վերաբերմունքի հարցում։ «Պայքարել կուլակի դեմ, ամուր հենվել չքավորության վրա և դաշինք կապել միջակի հետ» լոզունգը (VIII համագումարից մինչև XVI համագումարը)։ Տնտեսական տարաձայնությունները դեպի միջակն ունենալիք վերաբերմունքի հարցում՝ ծրագրի քննարկումն և ընդունելը VIII համագումարում։ Լենինի վեճը Բուխարինի հետ իմպերիալիզմի և «հին կապիտալիզմի» մասին, նույնպես և ազգային հարցի վերաբերմամբ և այդ վեճի կապն ու կուսակցության քաղաքականության հետ գյուղացիական հարցում։ Բուխարինի VIII համագումարում ունեցած սխալների կապակցությունը նրա նախընթաց ու հետագա սխալների հետ։



## III. ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻԶՄԸ— «ՊԱՇԱՐՎԱԾ ԼԱԳԵՐԻ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1918 թվի գարնան պլանից փոխանցում դեպի արդյունաբերության համատարած ազգայնացում։ Ժողովրդական տնտեսության ռազմա-կոմունիստական սիստեմի կազմակերպչական կառուցվածքը։ Բաշխման և սպառման կազմակերպումը։ Աշխատանքի կազմակերպումը։ Պարենմասնատրումը(продразверстка)։ Քաղաքի և գյուղի փոխհարաբերությունը ռազմական կոմունիզմի շրջանում։ Ռազմական կոմունիզմի անխուսափելիությունը քաղաքացիական կռվի ու բլոկադի պայմաններում։ Փորձեր ոգտագործելու այն ժամանակավոր հանգիստը, որ ստեղծվեց Դենիկինի պարտությունից մինչև Լեհաստանի ու Վրանգելի հետ ծագած պատերազմը։ IX համագումարի տնտեսական պլանը, որպես ռազմական կոմունիզմի քաղաքականության ամենից ավելի լրիվ արտահայտություն(աշխբանակ, աշխատանքի միլիտարիզացիա, միասնական տնտեսական պլան, արտադրու-

թյուն ու բաշխման կառավարման ռազմացենտրալիստական սխեմ): Կոլլեգիալության ու միանձնության ձևերի իմաստը:

Ռազմական կոմունիզմը վորպես անմիջականորեն սոցիալիզմի անցնելու փորձ: Ի՞նչ մտքով էր Լենինը խոսում ռազմական կոմունիզմի մասին, վորպես սխալի: «Յերկու Թեզում ռազմական կոմունիզմի գնահատության հարցերում՝ նրա դերի գերագնահատումը (Վարգա, Կրիցման) և աջ ուկլոնիստական մոռացումն ռազմական կոմունիզմի դրական կողմերի—պնդումն այն բանի վրա, թե՝ ռազմական կոմունիզմը—դա մի ամբողջովին սխալ է, (Բուխարինի դպրոցը, Այխենվալդ): Կոմինտերնի ծրագիրը ռազմական կոմունիզմի քաղաքականության միջազգային նշանակության մասին:

## IV. ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՌՎԻ ՅԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Կուսակցության վողջ ուշադրության կենտրոնացումը պատերազմի ու յերկրի պաշտպանության հարցերի վրա: Կուսակցության ռազմական աշխատանքը (զինակոչեր, քաղմարմիններ բանակում, բանվոր կոմիսարների դերը, զինվորական աշխատանքի և ֆրոնտից դուրս տարվող աշխատանքի կապակցությունը, լեգենդա Տրոցկու խաղացած դերի մասին հաղթանակը կազմակերպելու գործում):



Դեմոկրատիզմի շրջանակների սեղմումը կուսակցության մեջ: Պրոլետարական տարրերի հոսանքը կուսակցության մեջ ամենամեծ դժվարությունների շրջանում՝ կուսակցական շաբաթներ: Կուսակցության կազմակերպչական կառուցվածքը: Փոխհարաբերությունների սահմանումը և ֆունկցիաների սահմանավորումը կուսակցության ու խորհուրդների միջև: Դիկտատուրայի «շարժափոկերի» «проводн. ремнями» ղեկավարման պրոբլեմը տվյալ էտապում: Դիսկուսիա վերինների և ստորինների մասին («верхи и низы»):

1919 թվի դեկտեմբերյան կոնֆերենցիան: 1920 թվի սեպտեմբերյան կոնֆերենցիան:

Պայքար դեմոկրատական ցենտրալիզմի խմբակի դեմ (Սապրոնով-Օսինսկու խմբակը): Դեմոկրատական ցենտրալիզմի խմբակի սոցիալական արմատները: Ազգային կոմ-

կուսակցությունների ծագումը: Լենինի և ՌԿԿ.Ն ԿԿ-ի դերն ազգային կոմկուսակցությունների ազգային և գյուղացիական ճիշտ քաղաքականության համար մղվող պայքարում: Նախապատրաստումն ու ստեղծումը կոմխմբերնի:

## 9-ՐԴ ԹԵՄԱ
## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՊԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՇՐՋԱՆՈՒՄ

### I. ՓՈԽԱՆՑՈՒՄՆ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Երկրի տնտեսական դրությունը քաղաքացիական կռվի վերջում: Գյուղացիական տնտեսության կրիզիսը և նրա ազդեցությունը պրոլետարիատի ու գյուղացիության փոխհարաբերության վրա: Ներկուսակցական դրության հարցերը (վեճ «վերինների» և «ստորինների» մասին): Վորպես ընդհանուր կրիզիսի առաջին արտացոլումն: Խորհուրդների 8-րդ համագումարն և նրա վորոշումները գյուղացիական տնտեսության հարցերի մասին: Ելեկտրոֆիկացիայի պլանը: Կրոնշտատի խռովությունները վորպես մանր-բուրժուական մասսաների տատանումների արտահայտություն; Մանր-բուրժուական



հակահեղափոխություն և ինտերվենցիա: Հակահեղափոխության լոզունգները՝ «Խորհուրդներ առանց կոմունիստների» և ուրիշները: Հարաբերությունների վերանայման անհրաժեշտությունը, ամրացնելու համար զոդումը պրոլետարիատի և գյուղացիության միջև: X համագումարը Նեպ-ի մասին: Առաջին քայլերը դեպի Նեպ-ը: Մասնատրման փոխարինումը պարենհարկով և նրա նշանակությունը: 1921 թվի մայիսյան կոնֆերենցիան Նեպ-ի բովանդակության մասին: Ազգային հարցի և մեծապետական շովինիզմի ու տեղական շովինիզմի դեմ մղվող պայքարի քննարկումը կուսակցության X համագումարում:

### II. ՊԱՅՔԱՐ ԼԵՆԻՆՅԱՆ ԳԾԻ ՀԱՄԱՐ ՆԵՊ-ԻՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՇՐՋԱՆՈՒՄ

Արհմիությենական դիսկուսիան, վորպես արտացոլումն պրոլետարիատի և գյուղացիության հարաբերությունների միջև առաջացած կրիզիսի: Արհմիությենական դիսկուսիայի հիմնական ետապները: Տրոցկու պլատֆորմը արհմիությունները պետականացնելու մասին, վորպես ռազմա-կոմունիստա-

կան քաղաքականության շարունակություն նոր պայմաններում, որը (պլատֆորմը) տանում է դեպի պրոլետարիատի խզումը գյուղացիության հետ: Ընկ. Բուխարինի «բուֆերային» դիրքը և նրա սահքումը դեպի տրոցկիզմ: Անարխո-սինդիկալիստական թեքում կուսակցության մեջ: «Բանվորական օպոզիցիան» վորպես անարխո-սինդիկալիստական թեքման արտահայտություն: Թեքումների արմատները: Բոլոր օպոզիցիոն ֆրակցիաների կողմից լենինյան ուսմունքի չհասկանալը պրոլետարիատի դիկտատուրայի մասին:

## III. ՊԱՅՔԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

X համագումարը և արհմիությունների մասին տեղի ունեցած դիսկուսիայի հանրագումարները: Կուս. շինարարության հարցը նոր պայմաններում: X համագումարը կուսակցության միասնականության մասին: Համագումարը խմբավորումների և ֆրակցիաների արգելման մասին: Լենինը մանրբուրժուական յերկու հոսանքի մասին կուսակցության մեջ: Համագումարի վորոշումը



անարխո-սինդիկալիստների թեքման մասին: «Բանվորական օպոզիցիայի» եվոլյուցիան: Մյասնիկովշչինան: «Բանվորական օպոզիցիայի» ֆրակցիոն աշխատանքը: «Բանվորական օպոզիցիա» և Կոմինտերնը: Կուսակցության զտումն ու նրա նշանակությունը կուսակցության միասնականությունն ամրապնդելու գործում:

## IV. ԼԵՆԻՆՆ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՊ-Ի ՄԱՍԻՆ

Հիմնական տնտեսաձևերի տարրերը յերկրում և սոցիալիստական շինարարության ուղիները: Լենինը պետական կապիտալիզմի մասին: Նեպ-ը վորպես պրոլետարիատի միակ ուղիղ քաղաքականությունը կապիտալիզմից սոցիալիզմի փոխանցման շրջանում: Ռազմական կոմունիզմն և Նեպ-ը Կոմինտերնի ծրագրում: Նեպ-ի շրջանավորումը՝ Նեպ-ի վերականգնման և ռեկոնստրուկտիվ շրջանները, Նեպ-ի վերջին էտապը—սոցիալիզմի առաջին էտապ: Լենինը Նեպ-ի մասին: Դասակարգերն ու դասակարգային կռիվը Նեպ-ի պայմաններում:

«Ո՞վ-ո՞ւմ» հարցը: Նեպ-ը աջ օպոզիցիայի և տրոցկիստների գնահատությամբ:

ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

# ԼԵՆԻՆԸ ՊԱՅՔԱՐԻ ՄԵՋ՝ ՅԵՐԿՈՒ ՖՐՈՆՏՈՒՄ ՅԵՎ ՀԱՇՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ

10-ՐԴ ԹԵՄԱ

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

### I. *ՀԱՐՁԱԿՈՒՄ ՆԵՊ-Ի ՀԻՄԱՆ ՎՐԱ*

*Միջազգային դրությունը և միասնական ճակատի տակտիկան: Հակահեղափոխության տակտիկան՝ Խորհրդային Իշխանության կապիտալիստական վերասերման հույսերի վրա հիմնված: XI համագումարն և հարձակման անցնելը: XI համագումարի հիմնական վորոշումները (արհմիությունների մասին, ֆինանսների մասին և այլն): Լենինը սոցիալիստական շինարարության հեռանկարների մասին: Լենինի կոոպերատիվ պլանը: Լենինը պետապարատի վերակազմման պրոբլեմի մասին:*



*(«Կոոպերացիայի մասին», «Ինչպե՞ս վերակազմենք Բանգյուղտեսչությունը»): Կուսակցության XII համագումարն արդյունաբերության վերականգնման ուղիների մասին: Կուսակցության և պետապարատի փոխհարաբերության հարցն համագումարում: Փորձեր թուլացնելու կուսակցության ղեկավարող դերը (Կրասին, Տրոցկի): Ազգային հարցն համագումարում: Պայքար յերկու ֆրոնտում՝ ազգայնական թեքումների և վելիկոռուսական շովինիզմի դեմ, վորպես գլխավոր վտանգի:*

### II. *ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՏՐՈՑԿԻԶՄԻ ԴԵՄ*

*Տնտեսական դրությունն յերկրում 1923 թվի աշնանը: «Մկրատ»-ի պրոբլեմը: Տընտեսական կրիզիսն և ներկուսակցական դրությունը: «Բանվորական խմբակը» վորպես հետագա զարգացումն անարխո-սինդիկալիստական թեքման: «Ռաբոչայա պրավդան» վորպես մենշևիկյան իդեոլոգիայի դրսևորում: Տրոցկու և 46-ի պլատֆորմը: Տրոցկիստների և դեմոկրատական ցենտրալիստների կուսակցության դեմ պայքա-*

րում։ Օպոզիցիայի տնտեսական պլատֆորմը։ Տրոցկու «գերինդուստրացումը», գների քաղաքականությունը։ Կուսակցության տնտեսական պլատֆորմը՝ գյուղատնտեսության վերականգնումը, ֆինանսական ռեֆորմը, կոոպերացիան։ Օպոզիցիան և ներկուսակցական դեմոկրատիայի հարցը, կուսապարատի և յերիտասարդության դերի մասին (Տրոցկու «Նոր կուրսը»)։ Լենինի մահն ու կուսակցությունը։ Լենինյան կոչը։ V կոնգրեսը և կուսակցության XIII համագումարը մանր բուրժուական թեքման մասին։ Դիսկուսիա Տրոցկու «Հոկտեմբերյան դասեր»-ի շուրջը և նրա նշանակությունը։

## III. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՇՐՋԱՆԻ ՎԵՐՋԵՐԻՆ

Գյուղը 1924 թվի մոտերը։ Միջակի տասանումները։ Վրացական ապստամբությունը։ Գյուղացիական մի քանի խավերի դժգոհությունը և բանվոր-գյուղացիական դաշման ամրապնդման խնդիրը։ XIV կուս. կոնֆերենցիան և գյուղցիության հարցը։ Ռազմական կոմունիզմի մնացորդների լուծարքը, Թարհուրդների աշխուժացումն և հեղափոխական որինականության ամրապնդումը։ Աջ և «ձախ» թեքումների եությունը XIV կուսկոնֆերենցիայի մոտերքը։ Կուսակցության պայքարն յերկու ֆրոնտում՝ կուլակի դերի նվազեցման դեմ և միջակի, վորպես գյուղատնտեսության կենտրոնական դեմքի, համար տարվող պայքարի թերագնահատման դեմ։ Վերականգնման շրջանի հանրագումարները։ Միջազգային դրությունը։ Կապիտալիզմի հարաբերական ստաբիլիզացիան և Կոմինտերնի տակտիկան։ Մի յերկրում սոցիալիզմ կառուցելու պրոբլեմը XIV կուսկոնֆերենցիայում։

11–ՐԴ ԹԵՄԱ

# ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՊԻ ՌԵԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՇՐՋԱՆՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՏԱՐԻՆԵՐՈՒՄ

## I. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՂԹԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ

*Ժամանակավոր կապիտալիստական ստաբիլիզացիան և Խ.Ս.Հ.Մ–ի միջազգային դրությունը: Կուսակցության յերկրի ինդուստրացման քաղաքականության անցնելը: Կուսակցության XIV համագումարն— ինդուստրացման համագումար: Սոկոլնիկովի և Շանինի սխալները—յերկրի «ագրարացման» պաշտպանությունը: Ժողովրդական տնտեսության վերականգնման ավարտումը: Ժողովրդական տնտեսության մուտքը զարգացման նոր շրջան—ռեկոնստրուկցիայի շրջան:*



*Յերկրի ինդուստրացման ուղիները: Պետության ազդեցությունը (ներգործումը) յերկրի ամբողջ եկոնոմիկայի վրա, ապահովելու համար նրա զարգացումը դեպի սոցիալիզմ տանող ուղիով: Սոցիալիստական խոշոր արդյունաբերության առաջատար դերն յերկրի ամբողջ եկոնոմիկայի վերաբերմամբ ուժեղացնելու խնդիրը: Այդ արդյունաբերության առաջատար և սոցիալիստականորեն կերպարանափոխող դերը գյուղացիական տնտեսության վերաբերմամբ: Արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման տեմպերն արագացնելու կուսակցության գիծը: Կուտակման աղբյուրներն և ժողովրդական յեկամուտի վերաբաշխման խնդիրը: Կուսակցության գլխավոր գիծն և սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունը մի յերկրում: «Նոր օպոզիցիայի» յերևան գալն և կուսակցության պայքարը նրա դեմ: ԽՍՀՄ–ում սոցիալիզմ կառուցելու համար ներքին նախադրյալների ժխտումը «Նոր օպոզիցիայի» կողմից: Կապիտալիզմի անհամաչափ զարգացման մասին լենինյան ուսմունքի ռեվիզիան օպոզիցիայի կողմից:*

*Նեպ–ը, վորպես փոխանցման շրջանում*

կուսակցության միակ ուղիղ քաղաքականության, լենինյան ըմբռնման խեղաթյուրումը: Գյուղի սոցիալիստական վերափոխման լենինյան կոոպերատիվ պլանի ռեվիզիան: Լենինյան ուսմունքի ռեվիզիան պրոլետարիատի դիկտատուրայի և ԽՍՀՄ-ի պետական իշխանության բնույթի մասին: Կուսակցության դերի թերագնահատումն որպես պրոլետարիատի ավանգարդի: VIX համագումարը պայքարի մասին յերկու ֆրոնտում: Պայքար «Նոր օպոզիցիայի» դեմ, որպես տվյալ էտապում գլխավոր վտանգի և միաժամանակ կուլակային վտանգի աճման թերագնահատության դեմ:

## II. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐՆ ՕՊՈԶԻՑԻՈՆ ԲԼՈԿԻ ԴԵՄ

Կուսակցության մեջ մանր-բուրժուական տատանումների սրման սոցիալ-տնտեսական արմատները: Դասակարգային կռվի սրումը սոցիալիստական շինարարության դժվարությունների ուժեղացման կապակցությամբ: Օպոզիցիոն բլոկը որպես արտահայտություն կուսակցության մի մասի մեջ առաջացած վհատողական ու պարտվողական



տրամադրությունների: Նոր օպոզիցիայի տրոցկիզմին անցնելը մեր հեղափոխության բնույթի ու հեռանկարների հիմնական հարցում: Ժխտումը սոցիալիզմը կառուցելու հնարավորության՝ «սկզբում միքանի կամ մինչև իսկ մեկ, առանձին վերցրած կապիտալիստական յերկրում»: Օպոզիցիայի ծրագիրը յերկրի ինդուստրացման հարցում (գյուղացիությունը—գաղութ է): Օպոզիցիոն բլոկի պլատֆորմը Կոմինտերնի հարցերում (Չինական հեղափոխության հարցերը, Անգլո-ռուսական կոմիտե): Կապիտալիզմի մասնակի ստաբիլիզացիայի առկայության ժխտումը, սողոսկումը դեպի ուլտրա-«ձախ» ավանտյուրիզմի և պուտչիզմի ուղին: Օպոզիցիայի հայացքների գնահատությունը XV կուսկոնֆերենցիայի և Կոմ. Ինտերն. Գործկոմի VII պլենումի կողմից, որպես սոցիալ-դեմոկրատական թեքման արտահայտություն Համ. Կ(բ)Կ.-ում: Կամենևի և Զինովյևի օպորտունիստական հայացքների կապակցությունը նրանց 1917 թվի հոկտեմբերին բռնած դիրքի հետ, կուսակցության մեջ գոյություն ունեցող բոլոր սնանկացած և Համ.

Կ(բ)Կ․ ու Կոմինտերնի կողմից դատապարտված հոսանքների անսկզբունք միավորումը օպոզիցիոն բլոկի մեջ։ Օպոզիցիոն բլոկի պայքարի հակակուսակցական մեթոդները։ Նրա յերկյերեսանիությունը։ Օպոզիցիայի կողմից կուսակցական մասսաների հակադրությունը կուս․ ապարատին։ Պայքար կուսակցական դիսցիպլինայի դեմ։ Պայքար ֆրակցիաների և խմբավորումների ազատության համար։ Կուսակցության մեղադրումը տերմիդորիանության և ազգային սահմանափակության մեջ։ Օպոզիցիոն բլոկի պարտվողականությունը։ «Կապիտուլյանտությունը գործնականում վորպես բովանդակություն, «ձախ» ֆրազներն ու «հեղափոխական»-ավանտյուրիստական շարժուձևերը՝ վորպես ձև, վոր քողարկում ու ռեկլամ է անում կապիտուլյանտական բովանդակությունը—տրոցկիզմի եյությունն է» (Ստալին)։

## III․ ՏՐՈՑԿԻՍՏԱԿԱՆ ՈՊՈԶԻՑԻԱՅԻ ՏԱՊԱԼՈՒՄԸ

Յերկրորդ կուսակցության կառուցումն օպոզիցիայի կողմից։ Պայքար միասնական ու միակ կուսակցության համար—ընդդեմ սա–



սավլշչինայի։ Խորհրդային լեգալության սահմաններից անցնելը․ Կապ հակահեղափոխական տարրերի հետ ԽՍՀՄ-ի ներսում։ Օպոզիցիայի ստացած աջակցությունն «յերրորդ ուժի» կողմից։ Կապ հակալենինյան ֆրակցիոն խմբավորումների հետ Կոմինտերնի սեկցիաների ներսում, նույնպես և Կոմինտերնից արտաքսված կոմունիզմի ռենեգատների հետ։ Լիակատար փոխանցումն մենշևիզմի դիրքերը։ Համ․Կ(բ)Կ XV համագումարի վորոշումն այն մասին, վոր անհամատեղելի յե՝ պատկանել տրոցկիստական օպոզիցիային, քարոզել նրա հայացքներն ու միաժամանակ պատկանել Համ․Կ(բ)Կ․-ին։ Օպոզիցիայի կազմալուծումն։ Տրոցկիզմի պատմական հանրագումարները։

12-ՐԴ ԹԵՄԱ

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՊԻ ՌԵԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՇՐՋԱՆՈՒՄ

### I. *ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՐՁԱԿՈՒՄ (ԱՐՇԱՎ) ՆԵՊ-Ի ՌԵԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՄ*

*Կապիտալիստական սխեմի կրիզիսի յերրորդ շրջանն ու սոցիալիստական շինարարությունը ԽՍՀՄ-ում: Համ.Կ(բ)Կ XV-րդ համագումարը—կոլեկտիվացման համագումար: XV կուսհամագումարը յերկրի տնտեսության սոցիալիստական ռեկոնստրուկցիայի ուղիների մասին: Մասնավոր-կապիտալիստական տնտեսության վճռական արտամղման քաղաքականություն: ԽՍՀՄ-ի ինդուստրացման հնգամյա պլանը: Դժվարությունները, վտանգներն ու հակասությունները, որ կապված են աճման առանձնահատկությունների, յերկրի տեխնիկա-տնտեսական հետամնացության և պրոլետարիատին թշնամի սոցիալ-դասակարգային ուժերի ճնշման հետ: Դասակարգային կռվի սրումն, վորպես հետևանք սոցիալիզմի ուժեղ հարձակման կապիտալիզմի տարրերի վրա: Դասակարգային պայքար հացամթերման շուրջն և գյուղատնտեսության վերակառուցման խնդիրը: Զոդման նոր մեթոդներ ու ձևեր: Աշխատավոր մասսաների մոբիլիզացիան հնգամյակը կատարելու պայքարում: Պրոլետարական դիկտատուրայի ռեժիմի ամրապնդումն, է՛լ ավելի բարձրացում պրոլետարական մասսաների ակտիվության, ինքնագործունեության և կուլտուրականության, և պրոլետարիատի գաղափարական ազդեցության ուժեղացումն խորհրդային ինտելիգենցիայի ու վո՛չ պրոլետարական աշխատավոր մասսաների լայն խավերի վրա: Ինքնաքննադատության ծավալումն և օպորտունիստների պայքարը նրա դեմ: Համաշխարհային բուրժուազիայի և չահագործող դասակարգերի (ԽՍՀՄ-ում) հակահարձակումը («Պրոմպարտիայի», աշխատավոր գյուղացիական կուսակցության», «մենշևիկների միութենական բյուրոյի»,*

CBУ-ի և այլնի կազմակերպումը) և ինտերվենցիայի վտանգը: Ներկուսակցական դեմոկրատիայի զարգացումն և ինքնաքննադատության դերը: Կուսշինարարության խնդիրները ՆԷՊ-ի ռեկոնստրուկտիվ շրջանում:

## II. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐՆ ԱՋ ՈՊՈԶԻՑԻԱՅԻ ԴԵՄ

Դասակարգային պայքարի սրումն ու օպորտունիստական տատանումները կուսակցության շարքերում: «Ձախ» և աջ թեքումները Համ. Կ (բ) Կ շարքերում: Կուսակցության պայքարն յերկու ֆրոնտում ու հաշտվողականության դեմ: Աջ վտանգը վորպես գլխավոր վտանգ կուսակցության մեջ վերակառուցման շրջանում: Աջ թեքման, վորպես կուսակցության մեջ կուլակային ագենտուրայի, առաջ գալն ու ձևավորվելը: Աջ թեքման տեսական արմատները: Աջ ոպոզիցիայի պլատֆորմը: Պայքար ինդուստրացման, կոլեկտիվացման և խորհտնտեսական շինարարության բոլշևիկյան տեմպերի դեմ: Գյուղատնտեսության դեգրադացիայի թեորիան, նեղ տեղերին հավատարվելը, գյուղացիության անընդհատ զիջումներ անելու թեորիան: Կուսակցության



մեղադրումը գյուղացիությանը ռազմաֆեոդալական շահագործման յենթարկելու մեջ: Աջ թեքման ազգակցությունը կոնդրատևականության հետ: Աջ օպորտունիզմն արհմիությունների աշխատանքների մեջ. Աջերի և հաշտվողականների գիծը Կոմինտերնի հարցերում («կազմակերպված կապիտալիզմի» թեորիան, կապիտալիզմի նեխման ժխտումը): Բուխարինի խմբակը վորպես ձգողության կենտրոն բոլոր աջերի Կոմինտերնում: Աջ ոպոզիցիայի ֆրակցիոն գործունեյությունը: Աջ օպորտունիզմի հիմնական չարիքը—«խզումն դասակարգային կռվի լենինյան ըմբռնման հետ և գլորվելը դեպի մանր բուրժուական լիբերալիզմի հայեցակետը:»

## III. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԷՊ-Ի ՎԵՐՋԻՆ ԵՏԱՊՈՒՄ—ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԱՌԱՋԻՆ ԵՏԱՊՈՒՄ

Մեծ բեկման տարին: Տնտեսական ու քաղաքական հաջողություններ, վոր նախապատրաստեցին հնարավորություն անցնելու ՆԷՊ-ի նոր ետապին: «Ո՞վ-ում» հարցի վերջնական ու անվերադարձ լուծումն արդյունաբերության ասպարեզում: Գյուղա-

ցիության չքավոր ու միջակ մասսաների
շրջադարձը սոցիալիզմի կողմը և վճռական
բեկում խորհ-կոլտնտեսական շինարարու-
Թյան մեջ: Կուլակության շահագործական
տենդենցները սահմանափակելու քաղաքա-
կանությունից համատարած կոլեկտիվաց-
ման հիման վրա կուլակությունը որպես
դասակարգ վերացնելու քաղաքականության
անցնելը:

1930 Թ. գարնան կոլեկտիվացման փոր-
ձը հաշվի առնելը: Պայքար շեղումների և
«հաջողություններից գլխապտույտի» դեմ:
Համ Կ(բ)Կ. VXI համագումարը—սոցիալիզ-
մի ամբողջ ֆրոնտով ծավալուն հարձակման
համագումար, կուլակության որպես դա-
սակարգի վերացման և համատարած կոլեկ-
տիվացումը կյանքում կիրառելու համագու-
մար: Պայքար յերկու ֆրոնտում՝ աջ Թեք-
ման դեմ, որպես գլխավոր վտանգի և «ձախ»
Թեքման ու ձախական սխալների դեմ, նույն-
պես և Թեքումների նկատմամբ ցուցաբեր-
վող հաշտվողականության դեմ: Աջ ոպոզի-
ցիայի սնանկությունն ու նրա կապիտուլյա-
ցիան XVI համագումարում: Անսկզբունք
աջ-«ձախական» բլոկի ստեղծումը: «Ցեր-



կերեսանիությունը որպես ոպորտունիստա-
ների պայքարի մեթոդ կուսակցության դեմ:
Աջերի հայացքների անհամատեղելիությունը
Համ Կ (բ) Կ պատկանելու հետ: Չքավոր-
միջակ տնտեսությունների մեծամասնու-
Թյան կոլեկտիվացումը 1931 Թվին: Փոփո-
խություն դասակարգային ուժերի փոխհա-
րաբերությունների մեջ ԽՍՀՄ-ում կոլխո-
զային հաղթական շարժման հետևանքով:
Կոլխոզային գյուղացիությունը— Խ. Իշ-
խանության հիմնական ու գլխավոր հենա-
րանն և գյուղում ու կենտրոնական դեմքը
յերկրագործության մեջ: Հնգամյակի առա-
ջին յերկու տարիների հաջողությունները
որպես նախադրյալ սոցիալիստական շինա-
րարության տեմպերի հետագա արագաց-
ման: Սոցիալիստական սեկտորի դերակշռող
դերը ժողովրդական տնտեսության մեջ: Սո-
ցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուց-
ման ավարտումը հնգամյակի յերրորդ տա-
րում: Աշխատավոր մասսաների ակտիվու-
Թյան և աշխատանքային վերելքի աճումը
(սոցմրցում, հարվածայնություն, հանդի-
պական արդֆինպլան) որպես սոցիալիս-
տական հաջող շինարարության նախադրյալ

և կարևորագույն գործոն: Դժվարությունների հաղթահարում աշխատանքի վորակի բարելավման միջոցով պետական, տնտեսական և կոոպերատիվ ապարատների· բոլոր ողակներում և «տնտեսական զարգացման մեջ պլանային սկզբունքի ու պլանային դիսցիպլինայի արմատացումը»: Տնտհաշվարկը–ստուգումն ռուբլով: Կադրերի ստեղծման ու տեխնիկային տիրապետելու խնդիրը: Արհմիությունների աշխատանքի և կուսապարատի վերակառուցումը համապատասխան նոր խնդիրների:

Պայքար աջ ոպորտունիզմի դեմ, վոր մնում է իբրև գլխավոր վտանգ տվյալ էտապում, «ինքնահոսի» և մինիմալիզմի աջ ոպորտունիստական թեորիայի ու պրակտիկայի դեմ, սոցիալիստական շինարարության մեջ, նույնպես և «ձախ» խոտորումների, «ձախական հավասարացման» դեմ: Պայքարի սրումը իդեոլոգիական ֆրոնտում: Կուսակցությունը մեխանիցիզմի և մենշևիկող իդեալիզմի դեմ մղվող պայքարում:

Կուսակցության պայքարի ուժեղացումն յերկու ֆրոնտում–թեքումների դեմ ազգային հարցում և հաշտվողականության դեմ:



Մեծապետական նացիոնալիզմը—գլխավոր վտանգ: Ուշադրության ուժեղացումն դեպի «լենինյան ազգային քաղաքականության գործնական կիրառումը, ազգային անհավասարության էլեմենտների վերացումը և Խորհրդային Միության ժողովուրդների ազգային կուլտուրաների լայն զարգացումը:

«Ամբողջ ժողովրդական տնտեսության լծակները սոցիալիստական սեկտորի ձեռքին են—դա ԽՍՀՄ-ի սոցիալիզմի շրջանը թևակոխելու հիմնական ցուցանիշն է»: ՆԵՊ-ի վերջին էտապը—սոցիալիզմի առաջին էտապ:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 3—11

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱԽ.— Պայքար կուսակցության գլխավոր գծի համար և Համ.Կ(բ)Կ-ի պատմության խնդիրները . . . . . . 11—

1 Թեմա.—Բայլշևիզմի պատմական նախապատրաստությունը . . . 11

2 Թեմա.—Բայլշևիզմի ծագումը . 18

3 Թեմա.—Կուսակցությունը բուրժուա - դեմոկրատական հեղափոխության տարիներում (1905–1907 թ.) . . . . . . . . . 2

4. Թեմա.—Բայլշևիզմն ռեակցիայի և վերելքի տարիներում (փրակցիայից դեպի կուսակցություն) . . 3

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱԽ.— Բայլշևիզմն ինտերնացիոնալի շարքերում . 4—7

5 Թեմա.—Կուսակցությունն իմպերիալիստական պատերազմի տարիներում . . . . . . . . 4

6 Թեմա.—Կուսակցությունը 1917 թ. հեղափոխության մեջ . . . 5

7 Թեմա.—Բայլշևիզմը պրոլետարիատի դիկտատուրայի նվաճման ու ամրապնդման շրջանում . . 60

8 Թեմա.—Կուսակցությունը քաղաքացիական կռվի շրջանում և ռազմական կոմունիզմի քաղաքականությունը . . . . . . . 67

9 Թեմա.—Կուսակցությունը ՆԵՊ-ի անցնելու շրջանում . . . . 74

ԵՐՐՈՐԴ ԴԱՍԱԽ.—Լենինը պայքարի մեջ՝ երկու փրոնտում և հաշտվողականության դեմ . . . 78—95

10 Թեմա.—Կուսակցությունը վերականգնման շրջանում . . . . 78

11 Թեմա.—Կուսակցությունը ՆԵՊ-ի ռեկոնստրուկտիվ շրջանն անցնելու տարիներում . . . . . . 82

12 Թեմա.—Կուսակցությունը ՆԵՊ-ի ռեկոնստրուկտիվ շրջանում . . 88

ՀՀ Ազգային գրադարան
NL0183316

Գինը 50 կ. (8 մ.)

ՀՍՍՀ
ՊԵՏՀՐԱՏ

# ИСТОРИЯ ВКП (б)

Госиздат ССР Армении
Ереван—1941